

355(07)

Խ-11

ՊԱՋԸ ԱՎԻԱԲԻՍԸ՝ ԽՍՀՄ-ի խողովող աշխատանքի
ու պաշտպանության ճանձնարանն է

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանեց՝ ԳՐԱԲԻՈՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՋԸԱՎԻԱԲԻՍԻ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

1 MAR 2010

ՊԱՋԸ ԱՎԻԱԲԻՄԸ՝ ԽՍՀՄ՝ Խաղաղ աշխատանքի
ու պաշտպանության հենարանն է

355(07)

խ-11 28

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1003
13605

Թարգմանեց՝ ԳՐԱԲԻՈՍ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՋԸԱՎԻԱԲԻՄԻ
ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

11 8 JUL 2013

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2693
ԳՐԱՌԵՊ. 685 Բ. ՏԻՐԱԺ 3000

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

Ուղղմական գիտելիքների սույն խմբակի (նախնա-
կան տիպի) ծրագիրը նկատի ունի խմբակի այն մաս-
նակիցներին, վերոնք վաղ մի գիտելիք ու վարժություն
չունեն ուղղմական գործից: Այսինքն՝ ծրագիրը նկատի
ունի նախակույցան և մինչնախակույցան հասակի այն
յերիտասարդությունը, վերը դեռ ևս չի ծառայել
կարմիր բանակում: Ուստի ծավալելով խմբակի աշ-
խատանքը, ամենևին չպետք է նպատակ դնել մեծ ու
բարդ խնդիրներ, առավել ևս այն պատճառով, վեր
աշյ ղախատանքն ամբողջովին ու լիովին կառուցվում
և կամավորական սկզբունքներով: Պետք է հենց սկզբ-
րից նկատի ունենալ, վեր այն կարճ ժամանակամիջո-
ցում, ինչ աշխատում է խմբակը, նրա թույլ պատ-
րաստված, իսկ թերևս ամենևին անպատրաստ անգա-
մին, կարելի չէ հաղորդել միայն չափազանց քիչ քա-
նակով ուղղմական գիտելիքներ ու վարժություններ,
կարելի չէ միայն վերացնել նրա ուղղմական լիակատար
անդրադիտությունը:

Ավելի հիշա կլինեն ասել, վեր խմբակը վերջին
հաշվով կարող է միայն դրդել և հետաքրքրություն ա-
ռաջացնել ուսումնասիրելու ուղղմական գործը, հետա-
գայում կատարելագործվելու այլ ասպարիզում: Խմ-

բակավարը պետք է լիովին հաշվի առնի այլ հիմնա-
կան դրուժյունը և առաջին իսկ պարագմունքից իր
առաջ դնի մի շարք միանգամայն կոնկրետ և չափա-
զանց նեղ խնդիրներ, ուշադրութամբ հաշվի առնելով
հենց մասնակիցների իրենց հետաքրքրությունն ու
պատրաստակամությունը:

ԻՆՁԻ ՊԵՏԲԵ ԶԳՏԵԼ

Այդ խնդիրները կառավարացվեն մասնավորապես
հետևյալ ձևով. պարագմունքների վերջում՝ խմբակի
մասնակիցը պետք է ստանա հետևյալ վարժություն-
ները.

1. Հրաձգային ստուգողական մրցակցություննե-
րում, պառկած, ձեռքից, փոքր տրամաչափանի (փոքր
կալիբրի) հրացանից 25 մետրի վրա և կոսորիկներով՝
(դրոբ) 10 քայլի վրա, № 6 թիրախին, տալ 5 ձիգից
առնվազն 16 նշակ (աչկո): Դրա հետ միասին գիտենալ
դենքի քանդելը, հավաքելը, մաքրելը, յուզելը և խը-
նամելու կանոնները:

2. Կարողանալ աչքաչափով վերոջել տարածու-
թյունը մինչև 600 քայլ 10% ճշտությամբ:

3. Գիտենալ անհատ մարտիկի ընդհանուր պար-
տականությունները և կարողանալ գործնապես կատա-
րել այդ պարտականությունները: Մասնավորապես կա-
րողանալ արագ ու ճիշտ ըտրել վայրը հրաձգության,
դիտողության և պատասխարվելու համար, կարողանալ
քողարկվել ձեռքի տակ յեղած նյութերի ոգնությամբ,
կարողանալ արագ ու ճարպկորեն խրամատանալ:

4. Կարողանալ կողմորոշվել կողմնացույցով, արե-
վով ու աստղերով և կարգալ ամենապարզ պլանը:

5. Կարողանալ հակադարձ հագին գիտել ու կրակ
մղել: Կարողանալ առաջին բժշկական ոգնությունը
հասցնել գազով թունափորվածին, ինչպես նաև կարո-
ղանալ կապել իր և հարևանի վերքը (նախնական վի-
րակալ):

6. Գիտենալ հակառակորդի անխնդիրական միջոց-
ները դեմ կռվի ամենապարզ միջոցները:

Յեվ բացի դրանից.

7. Իրագեկ լինել ԽՍՀՄ միջազգային դուրքյանը,
հասկանալ կարմիր բանակի հերքական խնդիրները,
ամբողջ յերկիրը պաշտպանության պատրաստելու գոր-
ծում: Գիտենալ, թե ինչպես և կազմակերպված կար-
միր բանակը, հասկանալ կուսակցութան դերը, վոր-
պես Կարմիր բանակի կազմակերպչի ու առաջնորդի:
Հասկանալ իր խնդիրները, վորպես նախակոչիկի, կամ
վորպես ապագա նախակոչիկի:

ՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Հիշյալ խնդիրների գործնական իրականացման
ուղղությամբ կազմված և խմբակի ամբողջ ծրագիրը:
Նա բաղկացած է 4 հիմնական բաժիններից. 1. ուղ-
մական վտանգն ու ԽՍՀՄ պաշտպանությունը (ուղ-
մաքաղաքական հարցեր). 2. հրացան (հրաձգային
գործնություն (պրակտիկա). 3. մարտը դաշտում
(մարտավարական գործնություն). 4. ուղմական տեխ-
նիկա ու պայքարը նրա դեմ (քիմիա, ավիացիա և
զրահապատ ուժեր): Մշակելով այս ծրագիրը, պետք է
նկատի ունենալ յերեք հիմնական դրուժյուն.

1. Ծրագրում նշված է միայն աշխատանքի պար-
տադիր հիմնական կմախքը: Նայած ունենդիրների

պատրաստականութեանն ու հետաքրքրութեանը, ծրագիրը վոչ միայն կարելի չէ, այլև պետք է ձևափոխել. նախ՝ նշած թեմաներից մի քանիսը, յետո՛ւ պետք լինի, կարող են մշակել ավելի մեծ ծավալով, քան այդ նախատեսված է ծրագրով: Յերկրորդ՝ յետո՛ւ ունենդիրներն մեծ հետաքրքրութեան կատաճանա ղեպի մի վորեն հարց, վոր նախատեսված չէ ծրագրով, անհրաժեշտ է ծրագիրը լրացնել այդ հարցով. այդ նպատակով ծրագրին կցված է եպիղոգիկ թեմաների ցուցակ, վորոնք կարող են մշակվել լրացուցիչ ձևով, նշած տեղական պայմաններին:

2. Ծրագրին ամենևին չի սպասում խմբակի աշխատանքն ամբողջ ծավալով: Այսպես որինակ՝ հրաձգային գործին ծրագրում հատկացված է բնդամենը չորս պարապմունք, վորը վոչ մի կերպ չի կարելի բավական համարել: Ուստի ղեկավարի խնդիրը պետք է լինի վոչ միայն մշակել հրաձգային գործի այն պատվերները, վոր նշված են ծրագրում, այլև նրանց մշակումից հետո խմբակի անդամներին ներգրավել հրաձգարանում (տիրում) կատարած վարժություններին, կատարելով այդ վարժությունները կա՛մ հատուկ նշանակված օրերին, կա՛մ խմբակի պարապմունքներից հետո և այլն: Նույնը վերաբերում է նաև ռադմաքաղաքական թեմաներին: Սխալ կլինեիր, յետո՛ւ միջազգային դրութեան լուսարանումը սահմանափակվիր միայն մեկ պարապմունքով. խմբակավարը պետք է ժամանակ գտնի խմբակի անդամներին շարունակ իրազեկ պահելու միջազգային դրութեանն ու կարմիր բանակի հերթական խնդիրներին, նրանց հետ զրույցներ անելու, կարգալու ռադմական թերթեր և այլն:

3. Ամենևին պարտադիր չէ պահպանել ծրագրում մտնանշված պարապմունքների հաջորդականութեանը: Այդ հաջորդականութեանը պետք է թելադրեն միայն տեղական պայմաններն ու խմբակի անդամների հետաքրքրութեանը: Այսպես որինակ՝ ամենևին նպատակահարմար չէ մշակել բոլոր քաղաքական թեմաներն իրար յետևից և այն ել սկզբից: Դրանով, վորպես ներածական թեմա՝ «ԽՍՀՄ ու կապիտալիստները», պետք է մյուս յերկու քաղաքական թեմաները մշակել մի վորոչ ժամանակամիջոցից հետո, մեծընդմեջ ռադմական թեմաների հետ: Նույնը վերաբերում է և մնացյալ առարկաներին: Ընդհանրապես առարկաների խմբակը (ցիկլ) նշված են վոչ այնքան պարապմունքների կարգը սահմանալու համար, վորքան նրա համար, վորպետքի հնարավորութեան տրվի ղեկավարին ավելի հեշտ պատկերացնելու ծրագրի ու նրա առանձին մասերի ծավալը և առանձին պարապմունքների բնույթը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ամենադժվարին ու բարդ հարցն է խմբակի աշխատանքի մեթոդների ու ձևերի հարցը: Վատ մեթոդիկան հաճախ գցում է խմբակի անդամների հետաքրքրութեանը ղեպի աշխատանքը, առաջ է բերում խմբակի քայքայում: Ուստի մեթոդիկայի հարցերին խմբակավարը պետք է ամենամեծ ուշադրութեանը նվիրի:

Խմբակի աշխատանքի մեթոդիկայի հիմքում պիտի դրված լինի յերեք հիմնական սկզբունք. 1. գրավչություն. — կարողանալ խմբակի աշխատանքը կառուցել մրցակցութեան սկզբունքներով, կարողանալ ուշադրալ

խնդիր տալ, բերել կենդանի որինակ և այլն: 2. Յու-
ցադրականութիւն. — վճռապես հրաժարվել չոր ու
ցամանք «սլաւութիւնից», բոլոր հարցերը մշակել
ցուցադրական յեղանակով, գործնական աշխատանքի
հիման վրա, ողտագործելով պլակատը, փորձը և այլն:
3. Ի վնագործունեութիւն. — խմբակի ամբողջ աշխա-
տանքը կառուցել հենց իրենց մասնակցողներին ինքնու-
րոյն աշխատանքի և գործնական վարժութեան հիման
վրա:

Այդ յերեք հիմնական սկզբունքները խիստ արտա-
հայտված են ծրագրի ամբողջ բնույթի մէջ: Ուշադրու-
թյամբ քննութեան առնելով ծրագիրը, խմբակավարը
կտեսնի, փոքր յուրաքանչյուր պարագմունքը ըստ ելու-
թյամբ բաղկացած և մեկ կամ մի քանի պատմութիւններից
և յուրաքանչյուր հարցի մշակման սխառմբ հանգում
և նրան, փոքր խմբակի անդամների առաջ դրվում են մի
շարք փոքր չափի ու կոնկրետ խնդիրներ, և այդ խնդիր-
ները նրանք պետք և լուծեն: Նայած պարագմունքի
բնույթին, այդ պարագմունքները ստանում են զանա-
զան ձևեր (այդ մասին հետո): Բայց «խնդրի ձևը»
կարմիր թելով անցնում և ամբողջ ծրագրում սկզբից
մինչև վերջ: Այդպիսի սխառմով խմբակի առանձին
պարագմունքի ընթացքը պատկերացվում և մոտափո-
րապես հետեւյալ ձևով.

1. Խմբակավարը բացատրում և մասնակցողներին
խնդիրը, փոքր նրանք պետք և լուծեն (կամ պատկերը,
փոքր նրանք պետք և կատարեն), և ամփոփ կերպով հա-
ղորդում այն հիմնական տեղեկութիւնները, փոքր անհրա-
ժեշտ են այդ խնդրի լուծման համար, — հաղորդում և

ցույց տալով այդ վարժութեամբ, պլակատի կամ գոր-
ծիքի (պրէքտի) վրա:

2. Բմբունելով խնդիրը, մասնակցողները, — յուրա-
քանչյուրն ինքնուրույն կերպով, կամ բաժանվելով
ըստ խմբերի, կամ կոլլեկտիվ ձևով ամբողջ խմբակով, —
անցնում են խնդրի լուծմանը: Ղեկավարը հսկում և
մասնակցողների ինքնուրույն աշխատանքին, հրահան-
գում և նրանց, ուղղում և սխալները, առաջարկում և
միջանկյալ ամփոփում ու խնդիրներ և այլն:

3. Խնդրի լուծումն ավարտելուց հետո կազմակերպ-
վում և արածի մանրամասն վերլուծում: Մասնակցող-
ները զեկուցում են աշխատանքի արդյունքների մասին,
փոխադարձաբար քննում են ու պնդատում այդ ար-
դյունքները, ամփոփումներ են կատարում, ձեակեր-
պում են հիմնական կանոններն ու առաջարկները և այլն:

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ընդհանուր առմամբ մշակման այդ պրոցեսը կի-
րառելի չէ ծրագրի բոլոր հատվածների համար: Բայց,
խնդրի, յուրաքանչյուր հատվածի մեթոդիկան ունի
իր մի շարք առանձնահատկութիւններ:

1. Ռազմախաղափական հատվածի վերաբերյալ. այս-
տեղ պատմիքը հանդում և «տախտակ», պլակատ և
այլն պատրաստելուն: Այդ գործնական աշխատանքի,
այսինքն՝ այն նյութերի շուրջը, փոքր բնորոշում են
տախտակի և այլի համար, ծափալվում և ամբողջ պա-
րագմունքը:

Կարմիր բանակի պատմութեան հարցերի վերաբեր-
յալ ծրագիրը կազմված և միայն կողմնորոշիչ ձևով:
Խմբակում պետք և լուծարանել վոչ թե Կարմիր բա-

նակի ամբողջ պատմութիւնը, այլ գլխավորապէս բանակի այն վայրում մղած պայքարի պատմութիւնը, վորտեղ պարագում է խմբակը,—մասնակիցներին ամենից մոտ առանձին ճակատներ:

2. Հրաձգային հատվածի վերաբերյալ: Այդ հատվածը բաղկացած է մի շարք գործնական հրաձգութիւններից: Յուրաքանչյուր հրաձգութիւն սկզբից տեղի յետնեւում մի փոքրիկ զրույց այդ հրաձգութիւն նշանակութիւն մասին և այն պահանջների մասին, վոր պետք է կատարել: Հրաձգութիւնն ավարտելուց հետո տեղի յետնեւում յուրաքանչյուր մասնակցողի արդյունքների մանրամասն գնահատում (թիրախների (միջնների) զիտումը):

3. Մարտավարութեան (տակտիկայի) վերաբերյալ: Մարտավարութեան վերաբերող պարագմունքների հատվածը բաղկացած է մի շարք միակողմանի և յերկկողմանի խնդիրներից: Այդ խնդիրներն ամենափոքր հնարավորութեան դեպքում պետք է լուծել անմիջապէս տեղանքում: Իսկ յետեւ այդ անելու հնարավորութիւն չկա, պետք է լուծել ավագով արկղի վրա: Այստեղ առանձնապէս պետք է խուսափել «պատմելուց», կոնտրադիկցիոն անդիր անելուց, չոր ու ցամաք զրույցից և այլն: Կենտրոնական նշանակութիւն պետք է ստանան միջանկյալ տվյալներն ու վերլուծումը: Միջանկյալ տվյալների ճիշտ կիրառումն ու լավ անցկացրած վերլուծումը հնարավորութիւն կտան ուղիղ, յիշի ու համոզիչ կերպով մշակելու հիմնական մարտավարական հարցերը:

4. Ռազմական տեխնիկայի հատվածի վերաբերյալ: Այդ բաժինը մեթոդիկայի տեսակետից առանձնապէս

զգվար է, չնորհիվ գործիքների (պրիւրների), մոդելների և այլ ձեռնարկների բացակայութեան: Յետեւ հնարավորութիւն կա, պետք է կատարել փորձեր (քիմիական), ելակուրսիւններ—դեպի ուղիմական թանգարանը, ցուցահանդեսը, քիմիական պրիւրներ և այլն, պետք է պատրաստել մոդելներ և այլն: Յետեւ այդ անելու հնարավորութիւն չկա, պետք է դիմել կենդանի զրույցի, ըստ հնարավորութեան պատկերավորելով զրույցը (պլակատներով, գեղարվեստական հատվածներ կարդալով և այլն):

ԱՇԽԱՏԱՆՔՆ ԸՍՏ ՅԵՆԹԱԽՄԲԱԿՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Խմբակի մեթոդիկայի այլ հարցերից կանգ կառնենք միայն յերկուսը վրա. խմբակի ներսում կատարած յենթախմբակային աշխատանքի և յերկրորդը՝ մասնաշխատանքի աշխատանքում՝ խմբակի կատարած աշխատանքի վրա:

1. Յենթախմբակային աշխատանքի մասին: Մի շարք պարագմունքների համար հարկ կլինի, վոր խմբակը բաժանվի առանձին խմբերի, ջոկերի և այլն: Խմբակի աշխատանքի կաղմակերպման աշխ միջոցն ունի չափազանց կարեւոր նշանակութիւն. նա հնարավորութիւն է տալիս ինքնուրույն աշխատանքի մեջ քաշելու խմբակի բոլոր մասնակցողներին և բազմազան դարձնելու պարագմունքները: Վորոչ դեպքերում աշխ միջոցը հնարավորութիւն է տալիս աշխատանքը բաշխելու համաձայն մասնակցողների տարրեր պատրաստակաւութեան: Յուրաքանչյուր առանձին խմբի (ջոկի) ղեկավար պետք է կանգնի մի ղեկավար (ջոկի հրամանա-

տար), վորը նշանակվում է ամենից պատրաստված մասնակցողներից: Բայց ավելի լավ է, յեթե խմբակավարը կկարողանա իրեն համար խմբերի ղեկավարներ ընտրել վոչ թե խմբակի թույլ պատրաստված մասնակցողներից, այլ փոփոխիկներից, զորացրած յենթարկված կարմիր բանակայիններից և այլն: Խմբերի ղեկավարների հաջող ընտրությունն ու խնամքով հրահանգումը կողնի խմբակի աշխատանքը դարձնել առավել չափով արդյունավետ:

2. Մասնայական աշխատանքում խմբակի մասնակցության մասին: Խմբակի ղեկավարը պետք է ձգտի, վորպեսզի ամեն կերպ խմբակի անդամները և ամբողջ խմբակը մասնակցեն աղումբում կամ խրճիթ-ընթերցարանում տարվող ռազմական (մասնայական) ամբողջ աշխատանքին: Խմբակի անդամների մասնակցությունն այդ աշխատանքում պետք է ընդունի բազմազան ձևեր. նրանք կազմակերպում են հրաձգային մրցակցություն, սարքում են ցուցական վարժություն ավազով արկղի վրա, սարքում են ռազմական յերեկույթ, կարգում են ռազմական թերթեր և այլն:

ՍՏՈՒԳՈՒՄ

Խմբակի աշխատանքներն ավարտելուց հետո պետք է կազմակերպել ձեռք բերած արդյունքների ստուգում: Այդ ստուգումը պետք է, իհարկե, ընդունի վոչ թե քննության, այլ առանձնապես հետաքրքիր ու դրամիչ պարագմունքի ձև: Ստուգման լավագույն միջոցը յերկկողմանի մարտավարական պարագմունքն է (փոքրիկ ռազմափորձ, յերթ և այլն): Յանկալի յե, վորպեսզի այդպիսի պարագմունքի մեջ քաշվեն և

մյուս խմբակները (հարևան դյուղի, մի այլ ակմբի և այլ խմբակները), ինչպես նաև տեղական յերիտասարդությունը, նախակոչիկները և այլն:

1. ՌԱԶՄԱԿԱՆ ՎՏԱՆԳՆ ՈՒ ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԽՍՀՄ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ

Պարապմունքի նպատակը: Հիմնական տեղեկություններ հաղորդելով խՍՀՄ միջազգային դրուժյան մասին, խմբակի անդամների մեջ առաջ բերել հետաքրքրություն ուղղման թերթ կարգալու:

Բովանդակություն. խՍՀՄ ու նրա սահմանների քարտեզի ցուցադրումը: Մեր փոխհարաբերությունները կապիտալիստական յերկրների հետ: Նոր պատերազմի պատրաստությունը խՍՀՄ դեմ և այդ պատերազմի բնույթը (խՍՀՄ և Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Ռումինիա, Մերձբալթյան յերկրներ): Կապիտալիստների սպառազինման աճման մասին: Դիպլոմատների մասին: Մեր թշնամիների բանակները: Հողվածների ընթերցում ռազմական թերթից: Մեր խաղաղ քաղաքականությունը: Յերկրի պաշտպանունակությունը ամրացման անհրաժեշտությունը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Ղեկավարը պետք է պատրաստի պարապմունքի համար ղեկադրամներ, ռազմական թերթի համարներ, խՍՀՄ քարտեզ:

Պատվեր խմբակի համար: Ստեղծել ռազմական անկյունում «Միջազգային նորություններ ու ռազմական

վտանգը» տախտակ և սկիզբ դնել այդ տախտակի աշխատանքը կանոնավոր կատարելուն:

Պարապմունքի ընթացքը: Ղեկավարը խմբակի առաջ դնում է կոնկրետ խնդիր. ստեղծել «միջազգային նորությունների» տախտակ և պարբերաբար տանել նրա աշխատանքները:

Աշխատանքի սկիզբը դնելու համար այդ «տախտակի» վրա կախում են խՍՀՄ քարտեզը և ղեկադրամներ կապիտալիստների սպառազինման մասին: Այդ քարտեզի ու ղեկադրամների շուրջը տեղի յև ունենում կենդանի զրույց:

Ղեկավարը հրահանգում է խմբակի անդամներին այն մասին, թե ինչպես թերթում գտնել տախտակի համար անհրաժեշտ նյութը: Այդ առթիվ կարգացվում են հողվածներ, հեռագրեր, ցուցադրվում են ծաղրանկարներ և այլն:

Խմբակի անդամներն իրար մեջ բաշխում են «տախտակի» աշխատանքները տանելու պարտականությունները: Մեկն իր վրա յև վերցնում Լեհաստանին ու նրա՝ խՍՀՄ հետ ունեցած փոխհարաբերություններին թերթերով հետեւելու պարտականությունները և համադրատախտան նյութեր պատրաստելու «տախտակի» համար: Մյուսն այդ անում է Անգլիայի վերաբերյալ, յերրորդը՝ Ֆրանսիայի և այլն: Կարելի յև աշխատանքը բաշխել և այլ կերպ. անդամներից մի խումբակ փաստեր և հողաքում սպառազինման աճման մասին, մի ուրիշը՝ մեր փոխհարաբերությունների մասին այլ յերկրների հետ, յերրորդը գտնողան «կոնֆիրմաների» մասին և այլն:

2. ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել Կարմիր բանակի կազմակերպությանը, ԽՍՀՄ պաշտպանությանն ու ՀամԿ(Բ)Կ դերին, վորպես Կարմիր բանակի առաջնորդի ու կազմակերպչի:

Բովանդակությունը: Ապագա պատերազմի բնույթը: Բնակչության ամենալայն խավերի մասնակցությունն այդ պատերազմին: Կարմիր բանակի դերը: Բոլոր աշխատավորների ռազմական պատրաստությունն անհրաժեշտությունը: Կարմիր բանակի կազմակերպությունը: Ամուր կարգապահությունը, վորպես բանակի մարտունակության յերաչխի: Հեղափոխական-Ռազմական Խորհրդից մինչև ջուր: Հասկացողություն զանազան տեսակի զորքերի մասին, նրանց կազմը, մարտական գործադրությունն ու կազմակերպությունը: Հրաձգային վաշտի կազմակերպությունը: Քաղաքամիները, կոմիտայները, բջիջներն ու կոմյերիտմիությունը բանակում:

Պարտադիր զինվորական ծառայության մասին ուրենքը: Յերկրային սիստեմը: Յերկրային զորամասերի կազմակերպությունը: Նախակուշյան պատրաստություն: Աշխատավորների ռազմական պատրաստությունը: Կուսակցությունը, կոմյերիտմիությունը և յերկրի պաշտպանությունը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Պատրաստել բանակի կազմակերպության մասին սխեմաներ, «քաղվածքներ զինվորական ծառայության վերաբերյալ ուրենքից», թվեր (բանակում յեղած կուսակցականների, կոմյերիտականների մասին) և այլն:

Պատվեր խմբակի համար: Պատրաստել Կարմիր բանակի կազմակերպության սխեման և պլակատ յերկրի պաշտպանության կազմակերպման մասին:

Պարապմունքի ընթացքը: Նույնն է, ինչ նախընթաց պարապմունքի ժամանակ, այն է՝ պատվերները կատարելու շուրջը:

3. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ


Պարապմունքի նպատակը: Յույց տալ Հոկտեմբերի համար մղած Կարմիր բանակի հերոսական պայքարը և կուսակցության դերն այդ աշխատանքում:

Բովանդակությունը: Հոկտեմբերի տասնամյակն ու Կարմիր բանակի 10 տարին: Կարմիր Գվարդիայի դերը: Բրետտի հաշտությունը: Կոիվ չխոս-սլովակների, պետ-լյուրովչինայի, գեոմանչինայի դեմ: Դենիկին, Յուգենիչ, Կոլչակ, Վրանգել: Կոիվ սպիտակ յհների դեմ: Բանդիտիզմ: Հեռավոր Արևելքի աղատապրումը: Համ. Կ. Կ. ու կոմյերիտմիությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Պատրաստել քարտեզ և իլյուստրատիվ նյութ (պատկերներ, գեղարվեստական հատվածներ), ինչպես նաև թվեր քաղաքացիական պատերազմին մասնակցած կուսակցականների ու կոմյերիտականների մասին:

Պատվեր խմբակի համար: Պատրաստել քարտեզ «Կարմիր բանակի մարտական ուղին (Կրակե ողակում)»:

Պարապմունքի ընթացքը: Պարապմունքը ծավալվում է քարտեզի պատրաստման շուրջը: Պարապմունքը պետք է դարձնել վորքան կարելի յե գրավիչ, կազմակերպելով հուշեր, գեղարվեստական հատվածներ ընթերցում և այլն:



II. Հ Ր Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ

1. ԿՏՐՈՒՆ, ՀԱՏԻԿ, ՀՐԱՀԱՆ

(Զիգի կատարման տեխնիկան)

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել խմբակի անդամներին հրացանի ու ձիգի տեխնիկայի հետ:

Պարապմունքի բովանդակությունը: Հրացանի ցուցադրումը, ցույց տալով նրա հիմնական մասերը: Մարզանք հրաձգության պատրաստվելու նվազագույն (պատկած ու ծնկից): Ցույց տալ նշանառությունն ու հրաձգությունը: Միատեսակ նշանառություն վ սրժություն (ցուցանով (ուկազկա) կամ հայելիով): Հրացանի մաքրումը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Բացի հրացանից, ղեկավարը պետք է պատրաստի պարապմունքի համար մի քանի թիրախ (կտրված, չբռնանալի, յեռանկյունաձև), նշանոցի հաստոց (ստանոկ), ցուցան, կամ հայելիով գործիք, հրացանը մաքրելու պարապմունք, տրամադրված հրացանի պլակատ:

Պատվեր խմբակի համար: 1. Ծանոթանալ հրացանի հիմնական մասերին և սովորել հրացանը մաքրել:

2. Զգտել, վոր կարողանան հրահանք ձիգ իջնել:

Զգտել, վորպեսզի հաստոցից յեռակի նշանառություն ժամանակ (ցուցանով) 10 մետրից, թզթի վրա ստացած յեռանկյան կոդը 2 սանտիմետրից ավել չլինի:

Պարապմունքի ընթացքը: Ղեկավարը ցույց է տալիս խմբակի անդամներին հրացանը և պատմում է նրա մարտական հատկությունների ու հիմնական մասերի մասին: Այդ նախնական զրույցը պետք է տևի մոտ 10 րոպե: Ցերեք չպետք է ձգտել, վորպեսզի խմբակի անդամները հիշեն հրացանի բոլոր մասերի անունները: Հրացանը ցույց տալիս հիմնական ուղադրությունները պետք է դարձնել այն մասերի վրա, վորոնք անմիջական նշանակություն ունեն ձիգի ժամանակ (հատիկ, (մուշկա), նշանոցի չրջանակ (պրիցիլ. սամկա), հրահան (կուրոկ) և այլն:

Այնուհետև խմբակը բաժանվում է յերկու յենթախմբի:

Առաջին յենթախմբում պատվեր և ստանում ծանոթանալու այն պլակատին, վորի վրա նկարված է տրամադրված հրացանը և մարզվել հրաձգության պատրաստվելու նվազներում (յեթե կան համապատասխան պլակատներ, խումբը պետք է ծանոթանա նաև այդ պլակատներին):

Յերկրորդ յենթախմբում մարզվում է միատեսակ նշանառությամբ՝ ցուցանով կամ ցուցանի փոխարեն հայելիով գործիքով: Այդ խմբի աշխատանքի մեջ կարելի յե մտցնել մրցակցություն տարր, հայտարարելով մասնակցողների մեջ մրցություն, թե ո՞վ կտա ամենից փոքր յեռանկյունին:

Խմբերից յուրաքանչյուրն աշխատում է ու մարդովում իքնուրույն կերպով: Խմբակի ղեկավարը, տալով սկզբից անհրաժեշտ բացատրությունները յուրաքանչյուր խմբին, պարապմունքի ժամանակ անցնում է մի խմբից դեպի մյուսը, հրահանգելով մասնակցողներին:

րին և ուղղում է նրանց սխալները: Յանկալի յե, վոր-
պեսզի բոլոր խմբերում ջոկված լինի մի պատրաստ-
ված մասնակցող, վորը կարողանար հրահանգել
մյուսներին:

Վորոշ ժամանակից հետո յենթախմբերը վտխանա-
կում են իրենց ստացած պատվերները: Պարապմունքի
ժամանակ յուրաքանչյուր խումբ պետք է կատարի
յերկու վարժությունն էլ:

Խմբերում մարզանքն ավարտելուց հետո խմբակը
կրկին հավաքվում է մեկտեղ: Ղեկավարը ցույց է տա-
լիս, թե ինչպես պետք է մաքրել հրացանը: Այստեղ
նպատակահարմար է մանրամասնորեն ծանոթացնել
խմբակի անդամներին հրացանի մասերին և անցածի
մի փոքրիկ ստուգում կատարել:

2. ԻՆՉՊԵՍ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԿՐԱԿԵԼ

Պարապմունքի նպատակը: Զգուհի, վորպեսզի
խմբակի յուրաքանչյուր անդամ հասկանա, վոր հրաձը-
ղության կուտակությունը կախված է ճիշտ նշան բրո-
նելուց և հրահանն իջեցնելուց:

Պարապմունքի բովանդակությունը: Հրաձգու-
թյուն հրացանից կոտորիկներով, 10-15 մետրից, յու-
րաքանչյուր հրացանաձգին 5-ական ձիգ, պռկած,
ձեռքից (փոքր տրամաչափանի հրացանից՝ 20-30 մե-
տրից): Թիրախ № 6:

Հրաձգության արդյունքների չափումը կատարել
դարբարիտով*):

*) Գաբարիտը վորոշ չափի շրջան է, վոր դրվում է թիրա-
խի վրա գնդակների ցրման մակերեսին, վորի միջոցով չափում են
հրաձգության կուտակությունը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին:
Պատրաստել այն ամենը, ինչ անհրաժեշտ է հրաձգու-
թյան համար:

Պատվեր խմբակի եամար: Կոտորիկով 10 մետրից
կրակելիս, արձակած հինգ կոտորիկից չորսը պետք
է լինի 100 սանտիմետրանոց դարբարիտի ներսում:

Փոքր տրամաչափանի հրացանով 20-30 մետրի
վրա կատարած հրաձգության ժամանակ հինգ գնդա-
կից չորսը պետք է լինի 15-20 սանտիմետրանոց դարբ-
արիտի ներսում:

Պարապմունքի ընթացքը: Պարապմունքի սկզբի
համար ղեկավարը դուրս է կանչում մասնակցողներին
նրան, ով արդեն կարողանում է կրակել և առաջար-
կում է նրան կրակել համաձայն առաջադրած պայման-
ներին: Հրաձգությունից հետո ամբողջ խմբակը մո-
տենում է թիրախին, վորտեղ խմբակավարը բացա-
տրում է ստացած արդյունքները: Այնուհետև հերթով
կրակում է յուրաքանչյուր մասնակցող: Յուրաքան-
չյուր հրաձգության արդյունքները նույնպես մանրա-
մասնորեն բացատրվում են խմբակավարի կողմից:

Հրաձգությունն ավարտողներին կարելի յե ա-
ռաջարկել նույն վարժությունները, ինչ մասնանշված
են առաջին վարժությունում: Հրացանի և հրաձգու-
թյան վերաբերյալ պլակատների ուսումնասիրու-
թյան, մարզանքներ հրաձգության պատրաստվելու,
հրահանն իջեցնելու և նշանառության մեջ և այլն:

3. ԻՆՉՊԵՍ ԴԻՊՈՒԿ ԿՐԱԿԵԼ

Պարապմունքի նպատակը: Զգուհի, վորպեսզի յու-
րաքանչյուր հրացանաձիգ հասկանա, վոր գեղուկ

կրակել, նշանակում է կուտակված զիպցնեւ նշանի կենսորոնին, տեղափոխելով նշանառության կետը՝ նա-
յած զիպցնելու արդյունքներին:

Պարապմունքի բովանդակութեամբ: Հրաձգություն
կոտորելով, պառկած, ձեռքից, 10 մետրի, № 6 թիրա-
խին, յուրաքանչյուր հրացանաձգին 8 ձիգ (առաջին
3 ձիգի արդյունքները ցույց են տրվում յուրաքանչյուր
ձիգից հետո): Փորքը տրամաչափանի հրացանից հրա-
ձգությունը կատարել 20-30 մետրից, № 6 թիրախին:

Ղեկավարի պատրաստութեամբ պարապմունքին:
Նույնն է ինչ նախընթաց պարապմունքի համար:

Պատվեր խմբակի համար: 1. Խփել կոտորելով №
6 թիրախին, 10 մետրից, 10 նշակ է 15 մետրից № 5
թիրախին 20 նշակ (փոքր տրամաչափանի հրացանից՝
25-30 մետրից № 6 թիրախին՝ 16 նշակ):

2. Գծագրել գնդակի թռիչքի հետագիծը
և զիպչելու մակերեսը, կամ պատրաստել հետագծի
մակերեսը (փայտից կամ յերկաթալարից):

Պարապմունքի ընթացքը: Խմբակավարը խմբակի
անդամներին ծանոթացնում է այն պայմաններին, փո-
րոնցից կախված է հրաձգության զիպուկությունը,
ծանոթացնում է իր ձիգի արդյունքները զիպելու մի-
ջոցներին, ինչպես փոփոխել նշանառության կետը հա-
մաձայն զիպցնելու արդյունքներին և այլն:

Յուրաքանչյուր հրացանաձիգ արձակում է յերեք
փորձնական ձիգ, յուրաքանչյուր ձիգից հետո ցույց է
տրվում զիպցնելու արդյունքները և համաձայն զիպ-
ցնելու արդյունքներին ու զիպողության փոփոխում է
նշանառության կետը: Մնացած հինգ ձիգը կատարվում

են առանց ցույց տալու զիպուկության արդյունքները:

Յուրաքանչյուր մասնակցողի հրաձգության ար-
դյունքները գնահատվում են և քննության առնվում
խմբակավարի կողմից:

Արդեն կրակած մասնակցողներն աշխատում են
հետագծի նկարի կամ մոդելի պատրաստման վրա:

4. ԻՆՁԵՍ ՀԱՐՎԱԾԵԼ ՅԵՐԵՎԱՑՈՂ ՆՇԱՆԸ

Պարապմունքի նպատակը: Վարժեցնել հրացա-
նաձգին զիպել առջևում գտնվող տեղանքը, հետևել յե-
րեկացող նշանին, արագ պատրաստվել կրակի և հար-
վածել յերեկացող նշանը:

Պարապմունքի բովանդակութեամբ: Հրաձգու-
թյուն պառկած, ձեռքից, յերեկացող կտրված նշան-
ներին ավագով արկղների վրա:

Յուրաքանչյուր հրացանաձգին տրվում է հինգա-
կան փամփուշտ: Թիրախները յերեկում են 5 անգամ՝
5-7 վայրկյան ժամանակով:

Ղեկավարի պատրաստութեամբ պարապմունքին:
Պարապմունքի համար անհրաժեշտ է պատրաստել ա-
վագով արկղ թիրախներով, փորձք քողարկված են
և յերեկում են սեւյեֆի զանազան տեղերում: Յեթե
այդպիսի ավագով արկղ պատրաստել չի կարելի, այն
ժամանակ կարելի յէ յոլա գնալ առանց զրան, բայց
ավելի բարդացնելով պահանջը:

Պատվեր խմբակի համար: 5 ձիգից յերեկացող թի-
րախներին առնվազն մեկը զիպցնել:

Պարապմունքի ընթացքը: Նույնն է, ինչ նախըն-
թաց յերկու պարապմունքներում:

ՄԱՐՏԸ ԴԱՇՏՈՒՄ ՏԵՂԱՆՔ ՅԵՆԵԼԸ

Պարապմունքի նպատակը: Հասկացողություն տալ տեղանքի հատկութիւնների մասին՝ մարտական դործողութիւնների համար, տեղանքում կողմորոշվելու, աչքաչափով տարածութիւնը վորոշելու, տեղանքը թղթի կամ ավազով արկղի վրա պատկերելու մասին:

Խնկանդակութիւն: Տեղանք դուրս գալը: Ընտրած տեղամասի դիտումն ու քննարկումը (տեղական տարահաներ, սելէֆի կետեր): Տեղանքի պլանի (նախարդակի-կրտիկ) ցուցադրումն: Աշխարհի կողմերի վորոշումը և կողմորոշումը կողմնացույցով, արեւով, ժամացույցով և այլն: Տեղական առերկանների միջեկցած տարածութեան վորոշումը քարտեզի վրա: Տեղանքում աչքաչափով տարածութիւնը վորոշելու վարժութիւններ: Ուսումնասիրած տեղամասի փոխադրումը ավազով արկղի վրա:

Ղեկավարի պատրաստութիւնը. պարապմունքին: Նշել տեղանքի մի տեղամաս ըստ հնարավորութեան լողմածել սելէֆով, վորտեղ կան սելէֆի բոլոր կետերը և դանդաղան տեղական առերկաններ: Պատրաստել տեղամասի պլանն ու քարտեզը (խոշոր մասշտաբով) կամ պատրաստել այդ տեղամասի նախարդակը, յետեւ չկան պլանն ու քարտեզ: Վաղորդք չափել տարածութիւնը նշած կետից մինչև դանդաղան տեղական առերկաններն ու տեղանքում գտնվող կետերը: Պատ-

րաստել մարտավարական խնդիր, վորը պետք է առաջարկել խմբակին: Վերցնել իր հետ կողմնացույց, ժամացույց, թուղթ ու սովարաթուղթ և յետեւ կա՝ յերկդիտակ (բինոկլ):

Պատվեր խմբակի կամար: 1. Գնահատել, թե վորան պետքական է տեղանքի տվյալ մասը վորոշ մարտական պատկեր կատարելու համար:

2. Սովորել աշխարհի կողմերը կողմացույցով վորոշելը, արեւով, ժամացույցով և այլն: Կանչանակված չըջապատում յերեացող սելէֆի կետերն ու տեղական առերկանները:

3. Աչքաչափով վորոշել տարածութիւնը մինչև մատնանշված տեղական առերկանները և տեղանքի վրա գտնվող կետերը (մինչև 600 քայլ):

4. Տեղանքի ընտրած և ուսումնասիրած տեղամասը փոխադրել ավազով արկղի վրա:

Պարապմունքի ընթացքը: 1. Առաջին պատվերի կատարումը, այսինքն՝ տվյալ տեղամասի գնահատութիւնը մարտական դործողութիւնների համար պետքական լինելու տեսակետից, — կատարվում է պարզ մարտավարական խնդրի լուծման միջոցով: Ահա աշխարհի խնդրի մի որինակ.

«Հարկավոր է մի գերի բռնել: Դրա համար անհրաժեշտ է տեղամասում մի վորեւ տեղ կազմակերպել դարան, նկատի ունենալով, վոր հակառակորդի առանձին մարդիկ սպասվում են այսինչ ուղղութեամբ»:

Պարապմունքը բաժանվում է յերկու խմբի, մեկը ներկայացնում է դարանակալած ջոկին, իսկ մյուսը՝ հակառակորդի մարդկանց: Դարանի մասնակցողներն

ինքնուրույն, ջուկի հրամանատարի ցուցումներով (ջուկի հրամանատարը առանձնացվում է հենց իրենց՝ մասնակցողներից) տեղափոխվում են տեղանքում այնպես, ինչպես հարմար է իրենց: Դրանից հետո հավառակ կողմի մասնակցողները սկսում են առաջ շարժվել: Ղեկավարի ազդանշանով առաջխաղացումը կանգ է առնում: Քննում են, թե վորքան հաջող են հրացանաձիգները դասավորվել դարանում, և վորքան հարմար է տեղանքը՝ դարանը կազմակերպելու համար (յերևո՞ւմ է յին արգյոք դարանում նստողները, վորտեղի՞ց է յին յերևում և ինչո՞ւ, վորտեղ պետք է թաղնվել յին և այլն):

Մի յերկու այսպիսի խնդիր լուծելուց հետո խումբակն ի մի յե ամփոփում ստացած փորձը և տալիս է տեղանքում ընտրած տեղամասի գնահատականն այդ մարտական գործողությունների համար: Դրա հետ միաժամանակ ղեկավարը հաղորդում է հիմնական տեղադրական տերմինները (զազաթ, ձորակ, տեղական առարկաներ և այլն):

2. Յերկրորդ պատվերը (կողմորոշումն ու պլանի ընթերցումը) կատարվում է հետևյալ ձևով. ղեկավարը ցուցադրում է խմբակին տվյալ տեղամասի պլանը (նախարդակը) և առաջարկում է մասնակցողներին ցույց տալ, թե ինչպես և վորտեղ են պլանի վրա նշանակված չրջապատում յերևացող ուղյակֆի կետերն ու տեղական առարկաները:

Մասնակցողներն սկզբում կողմորոշում են պլանը տեղական առարկաներով: Հետո նրանց առաջարկվում է լուծել, թե ինչպես կարելի յե կողմորոշ-

վել առանց տեղական առարկաների ոգնության, այստեղից անցնում են կողմնացույցով կողմորոշվելու, աշխարհի կողմերը ժամացույցով, արևով վորոշելու և այլ վարժություններին:

Մասնակցողները չափում են կետերի միջև յեղած տարածությունը տեղանքում և ապա պլանի վրա: Այդպիսով նրանք հասկացողություն են կազմում մաշտարի մասին, և մի շարք պատվերներ են ստանում պլանի միջոցով վորոշելու տեղական առարկաների միջև յեղած տարածությունները:

Վորպեսզի այս պատվերի կատարումն անցնի ըստ հնարավորին աշխուժ, հենց իրենց անդամների ինքնուրույն աշխատանքի հիման վրա, ցանկալի յե, վորպեսզի տեղամասի պլանը (կամ նախարդակը) պատրաստված լինի մի քանի օրինակներով: Այդ դեպքում նպատակահարմար է խմբակը բաժանել մի քանի խմբերի, տալով յուրաքանչյուր խմբին այս կամ այն պատվերը (վորոշել տարածությունը, կողմորոշվել և այլն):

3. Տարածություններն աչքաչափով վորոշելու վարժությունը կարող է սկսվել և նախընթաց պատվերի կատարման ժամանակ (տարածությունը տեղանքում ու պլանի վրա վորոշելու հետ միասին):

Յեթե ժամանակ կա, այդ վարժությունը կարելի յե կատարել հետևյալ ձևով. խմբակը բաժանվում է մի քանի խմբի, ունենալով ամեն մի խմբում 4-5 հոգի: Խումբը խմբակները միատեսակ պատվերներ են ստանում. վորոշել տարածությունը մինչև այս-ինչ տեղական առարկաները: Յուրաքանչյուր խումբ աշխատում է ինք-

նուրույն: Խմբի մասնակցողները խորհրդակցում են իրար հետ և ոգնում են իրար լուծելու առաջարկած ինդիքը: Այն ժամանակ, յերբ արդեն բոլոր խմբերը հայտնել են ղեկավարին իրենց արդյունքները, այդ արդյունքները ստուգվում են: Հաղթող և համարվում այն խումբը, վորը ավել և ամենից չատ ճիշտ պատասխաններ:

4. Յեթե խմբակի անդամների մեջ մեծ հետաքրքրություն և առաջացել, այդ դեպքում տեղամասի փոխադրումն ավագով արկղի վրա կարելի չե կատարել ամբողջ խմբով միասին, դրան նվիրելով մի առանձին պարապմունք: Իսկ յեթե վորեւ պատճառով այդ անելու հնարավորություն չկա, այն ժամանակ ավելի հեշտ և խմբակից ջոկել մի փոքրիկ հանձնաժողով (անդամների ակտիվից) և հանձնարարել նրան կատարել այդ պատվերը (ի հարկի, խմբակավարի անմիջական հրահանգով):

Վորպես գործնական աշխատանք այդ պարապմունքի համար, կարելի չե հանձնարարել պատրաստելու «տեղադրական լուտո», վորը պատրաստվում և սովորական թվերով լուտոյի սկզբունքով, միայն այստեղ թվերը փոխարինված են պայմանական նշաններով:

2. ՄԱՐՏԻԿԸ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել մասնակցողներին պահպանության մեջ գտնվող մարտիկի պարտականություններին (յերթում, անչարժ պահպանությունում, մարտական պահպանությունում):

Բովանդակությունը: Խնդիր պահպանող դեպքում գտնվող ջոկի ծառայության մասին: Խմբակն ըստ ջո-

կերի բաշխելն ու նրանց ուղարկելը: Ջոկերի կողմից ղիտակալներ նշանակելը: Ջոկերի ու ղիտակալների շարժումը: Միջանկյալ խնդիրների լուծում: Խնդիր անչարժ պահպանություն վերաբերյալ: Դիտելու և ժամապահներին դասավորելու համար կետերի ընտրություն: Ջոկի դասավորությունը մատնանշած կետի պաշտպանության համար: Միջանկյալ խնդիրների լուծում անչարժ պահպանության վերաբերյալ: Խնդիր մարտական պահպանությունից: Ջոկի դասավորությունը մարտական դասավորության համար: Մոտեցող հասակավորդի յետ մղումը: Պարապմունքի վերլուծում:

Ղեկավարի պատրաստուքյունը պարապմունքին.

Ամենից լավ և, յերբ պարապմունքն անցնում և տեղանքում: Այդ դեպքում ղեկավարը պետք է՝ 1) նախապես նշի տեղամասը, վորն ըստ հնարավորին պետք և կտրուկ վայր (пересеченная местность) լինի, 2) խնամքով մշակի խնդիրներն ու միջանկյալ տվյալները, 3) նշի այդ խնդիրներին լուծման կարգը և ջոկերի դասավորությունը մարտական պահպանությունում և դաշտային պահակում: Իսկ յեթե պարապմունքն անցնում և ավագով արկղի վրա, հարկավոր և բացի նշած խնդիրներից ու միջանկյալ տվյալներից՝ 1) վաղորդ պատրաստել համապատասխան օկլեֆ և դրաններ (шашики) մարտիկներ նշելու համար, 2) հարկավոր և պատրաստել համապատասխան պրակատներ մարտական պահպանությունում և դաշտային պահակում գտնվող ջոկերի մասին:

1. Պատվեր խմբի համար: 1) կազմել այս-ինչ ուղ-

դուլթյամբ յերթական պահպանության ուղարկած ջոկի գործողությունների մանրամասն ծրագիրը:

2. Կազմել այս-ինչ տեղամասում անշարժ պահպանության մեջ գտնվող ջոկի դասավորության ու գործողությունների ծրագիրը:

3. Կազմել այս-ինչ տեղամասում գտնվող մարտական պահպանող ջոկի գործողությունների ծրագիրը:

Պարապմունքի ընթացքը: 1. Նմբակը բաժանվում է հրաձգային ջոկերի (նայած մասնակցողների քանակին 2-ական կամ 3-ական ջոկի): Յուրաքանչյուր ջոկի ղրուխ է անցնում ջոկի հրամանատարը, վորը նշանակվում է ամենից պատրաստված մասնակցողների միջից: (Ջոկի հրամանատարները պետք է վաղորդք հրահանգվեն և ծանոթանան հետևակի մարտական կանոնադրի համապատասխան կետերին): Յենթադրվում է, որինակ՝ այսպիսի մի խնդիր.

«Մեր վաշտը դուժարտակի կազմի մեջ հարձակվում է այս-ինչ դյուղի վրա: Մեր դասակը կազմում է առաջավոր յերթական ուղեկալը (походная застава): Պահպանության համար առաջ են քաշված յերեք դետա

дзор): մեկը ձանապարհով, մեկը դեպի այս-ինչ բարձունքով և յերրորդը՝ դեպի այս-ինչ թփուտների յեզրը»:

Ջոկն սկսում է շարժումը: Շարժման ընթացքում խմբակավարը տալիս է մի շարք միջանկյալ պատվերներ, ինչպես, որինակ՝

«Այս-ինչ ուղղությամբ նկատված է հակառակորդի յերեք հրացանաձիգը: Ինչ պետք է անեն դիտակալները (наблюдатели)»:

«Իետքը հանդիպեց նահանջող հետախույզներին, վորոնք հաղորդեցին, վոր հակառակորդի մարդիկ գրտնվում են անմիջապես այս-ինչ բլրակի յետևում: Ի՞նչ պետք է անեն գիտակալները»:

Վորքան ավելի շատ լինեն այսպիսի միջանկյալ տվյալներ, վորքան այդ տվյալները բազմազան լինեն, այնքան ավելի հետաքրքիր կանցնի պարապմունքը: Յանկալի յև, վոր այդ միջանկյալ տվյալները վոչ թե պայմանական լինեն, այլ ներկայացվեն խմբակի անդամների կողմից:

Ջոկերի շարժման ժամանակ խմբակավարը (յեթե վաղորդք կազմակերպել է միջանկյալ տվյալների նշանադրումը (обозначение) և մանրամասն հրահանգել և ջոկի հրամանատարներին) կարող է գտնվել բարձր դիտակետում և այնտեղից հետևել ջոկերի գործողություններին: Նրա ազդանշանով շարժումը կանդ է առնում: Նմբակը հավաքվում է մեկտեղ՝ վաղորդք նշանակված հավաքակայանը, վորտեղ կատարվում է դետաքերի գործողությունների մանրամասն վերլուծում:

2. Անշարժ պահպանության վերաբերող խնդիրը մոտավորապես այսպիսի ձև ունի.

«Հակառակորդը սպասվում է այս-ինչ ուղղությամբ: Մեր հանգստացող մասերը տեղավորված են այս-ինչ տեղում: Նրանցից անշարժ պահպանություն է դրված այս-ինչ բնագծով (рубеж), այս-ինչ կետից մինչև այս-ինչ կետը: Մեր դասակը գրավում է այս-ինչ շրջանը: Մեր դասակի առաջին ջոկին հրամայված է տեղավորվել այս-ինչ տեղում և դիտողության տակ ունենալ այս-ինչ շրջանը: Յերկրորդ ջոկը պետք է գր-

լավի աշտինչ կրակային կետը, նշանակի ժամապահ
և ժամապահի ոգնական: Մեղանից ձախ տեղավորված
և աշտինչ դասակր, մեղանից աջ՝ մեր դասակի աշտինչ
ջուղը»:

Գործողությունների կարգը նույնն է, ինչ նախ-
ընթաց պատվերի կատարման ժամանակ: Զուգի հրա-
մանատարն ընարում է առջևում գտնվող տեղանքը գի-
տելու համար հարմար կետեր, դասավորում է ժամա-
պահին ու նրա ողնականին, դասավորում է ջուղը աշ-
տի պաշտպանության համար, վորը ջուղին հանձնա-
րարված է պահել, հաղորդում է պայմանական նշան-
ներ և այլն: Այս պատվերի կատարման ժամանակ մի-
ջանկյալ տվյալները կարող են տոանձնապես հետաքրք-
րել լինել:

«Ժամապահը նկատել է 500 քայլի վրա հակառա-
կորդի առանձին մարդկանց, վորոնք մոտենում են
պոստին»:

«Աշտինչ կետին մոտենում է յերկու հոգի սպիտակ
թաշկինակը ձեռքներին»:

«Հարևան պոստը հրաձգություն է սկսել թշնամու
հետ»:

«Պոստին մոտենում է իր գործառնի հրամանատա-
րը և այլն»:

3. Մարտական պահպանության համար խնդիրը
կրնդունի հետևյալ տեսքը.

«Մեր ջուղը գտնվում է պահպանող դասակի կապի
մեջ: Մեղանից ձախ գտնվում է հաստոցավոր զնդացի, իսկ
մեղանից աջ վոչ վոք չկա: Մենք պետք է տեղա-
վորվենք աշտ բլրակի վրա, յերբ հակառակորդը գա,

նրան գիմամորենք կրակով, յերբ հակառակորդը բա-
ցադատվի, մենք կհահանջենք աշտինչ անտառակի մի-
ջով»:

Լուծման կարգը նույնն է, ինչ և նախընթաց յերկու
որինականքում:

4. Այն դեպքում, յերբ պարապմունքն անկարելի յե-
տանել անմիջապես տեղանքում, անհրաժեշտ է այդ
անել տվազով տկրդի վրա: Յուրաքանչյուր մասնակ-
ցող ու ջուղի հրամանատար ստանում են զլաններ, վո-
րոնցով նրանք նշելու յեն իրենց զբաղվածներ ու յեթ
պլանի վրա: Խնդիրները յենթադրվում են մոտավորա-
պես նույն տիպի, ինչ և տեղանքում: Մասնակցողները
կոլլեկտիվ ձևով քննարկում են խնդրի լուծման ծրա-
դիրը և այնուհետև, ջուղի հրամանատարի ցուցում-
ներով, զլաններով նշում են իրենց տեղերը (յեթե լու-
ծում են խնդիր յերթական պահպանությանից, մառ-
նակցողներն այդ տեղերը նշում են մի քանի անգամ,—
կես ժամվա, մեկ ժամվա, մեկ ու կես, յերկու ժամվա
հանապարհից հետո և այլն): Այնուհետև յերբ տեղերը
նշված են, և հիմնական խնդիրը լուծված է, խմբակա-
վարն առաջարկում է մի շարք միջանկյալ տվյալներ,
նույնպիսի տիպի, ինչ վերևն և առված: Ավազով ար-
կրդի վրա պարապելիս, միջանկյալ տվյալներն ունեն
բացառիկ կարևոր նշանակություն. այդ միջանկյալ
տվյալների հմտությամբ ընտրությունը հնարավորու-
թյուն կտա առանձնապես պարզ ու կենդան ձևով ծա-
նոթացնել խմբակի անդամներին հետևակի մարտական
կանոնադրի հիմնական դրությունների հետ: Միջան-
կյալ խնդիրները լուծվում են խմբակի անդամների կող-

մից կուլեկտիվ ձևով, և այնուհետև այդ լուծումը դը-
նահատվում է խմբակավարի կողմից:

Պարապմունքն ավարտելուց հետո կազմակերպվում
է ամբողջ կատարածի մանրամասն վերլուծում, և ամ-
փոփում է պատվերի կատարումը:

3. ՄԱՐՏԻԿԸ ՇԵՏԱՆՈՒՋՈՒՅՈՒՆ ՄԵՋ

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել հետախու-
զության մեջ գտնվող մարտիկի պարտականություն-
ներին:

Պարապմունքի բովանդակությունը: Խնդիր՝ հետա-
խուզության մեջ գտնվող հրաձգային ջոկի գործողու-
թյունների վերաբերյալ: Ջոկի միջուկի (ядро) և գե-
տակալների շարժումը: Հետախուզության ծրագրի
կազմումը: Դեպքեր ուղարկելը: Գործողությունների
հակառակորդին հանդիպելիս: Միջանկյալ խնդիրներ:
Ջոկի գործողությունների վերլուծում:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին:
Նույնն է, ինչ և նախընթաց պարապմունքներում:

Պատվեր խմբակի համար: Կազմել այս-ինչ ուղղու-
թյամբ, հետախուզող զետեք ուղարկված ջոկի գործո-
ղությունների ծրագրերը:

Պարապմունքի ընթացքը. 1. Այս պարապմունքը,
ինչպես և նախընթացը, ավելի լավ և անցնել տեղան-
քում, բայց հակառակ նախընթաց պարապմունքին,
հարկավոր է սրան տալ ամենապարզ յերկկողմ խա-
ղի ձև:

Խմբակը բաժանվում է յերկու խմբի (ջոկի): Յեր-
կու խումբն էլ իրարից հեռացվում են ըստ հնարապո-

րուժյան մեծ տարածություն վրա (նայած տեղանքի
պայմաններին): Յուրաքանչյուր ջոկ ստանում է մո-
տախորապես այսպիսի մի խնդիր:

«Մեր վաշտը հարձակվում է այս-ինչ ուղղու-
թյամբ: Մեր ջոկն ուղարկված է, վորպես հետախուզող
զետեք: Նրան հրամայված է հետախուզություն կատա-
րել այս-ինչ ուղղությամբ և պարզել այս ու այս (զը-
րավված է արդյոք բարձունքը, այս կամ այն կետերը
տոնող մատույցները և այլն): Զեկուցումն ուղարկել
այս-ինչ տեղը և այլն»:

Յերկու խմբերին էլ խնդիրները տրվում է այնպիսի
ձևով, վոր նրանք հետախուզության ժամանակ կա-
րողանան իրար հանդիպել:

Յուրաքանչյուր խումբ նշում է իր գործողություն-
ների ծրագրերը: Այդ ծրագրերն առաջարկվում է ջոկերի
հրամանատարներին, քննարկվում է բոլոր մասնակցող-
ների կողմից և զնահատվում է խմբակավարի կողմից
(վորովհետև յերկու խմբերն իրարից շատ են հեռաց-
ված, ցանկալի չէ, վոր խմբակավարն այդ պարապմուն-
քի համար ջոկի մի փորձված ոգնական, վորը փոխա-
րիններ նրան կողմերից մեկում):

Խմբակավարի ազդանշանով սկսվում է յերկու
խմբերի շարժումը՝ համաձայն մշակված ծրագրի: Խըմ-
բակավարն ու նրա ոգնականը շարժվում են խմբերի
հետ միասին, հետևելով նրանց գործողություններին
և միջանկյալ պատվերներ տալով (այդ միջանկյալ
պատվերները պետք է վաղորդք մշակված լինեն և հայտ-
նի լինեն թե՛ խմբակավարին և թե՛ նրա ոգնականին):
Ինչպես և նախընթաց պարապմունքում, ցանկալի չէ,

վոր միջանկյալ խնդիրները մոչ թե պայմանական լինեն, այլ ներկայացվեն ունյալ ձևով: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ներկա պարապմունքում միջանկյալ խնդիրները ավելի քիչ լինեն, քան նախընթաց պարապմունքում, քանի վոր յերկու խմբերի հանդիպումը մասնակցողների առաջ կդնի մի շարք խնդիրներ, վոր մասնակցողները պետք է լուծեն:

Միջանկյալ պատվերների որինակներ. «դիտակարանները հանդիպել են տեղական բնակչի»:

«Առանձին տնակից դնդակ են արձակել դետքի վրա»:

«Սպանված է ջուկի հրամանատարը»:

«Յերեացել է մի սավառնակ» է այլն:

Պարապմունքի վերջը կարող է տարրեր լինել: Վերլուծման ժամանակ առանձնապես կարևոր է չետել, վոր պաշտպանվող հակառակորդի վրա հարձակվելիս հետախուզության ելությունն է՝ պարզել հակառակորդի կրակի սխտեմը: Դրա համար հետախուզությունն աշխատում է ներս մտնել հակառակորդի պահպանության արանքները, առանց իրեն հայտնաբերելու: Իսկ վորտեղ այդ անկարելի չե անել, հետախուզությունն իրեն համար ճանապարհ է բացում կրակով ու հարվածով: Յեթե ժամանակ կա, ցանկալի չե մի պարապմունք էլ նվիրել հետախուզության ու պահպանության հարցերի մշակման: Այդ պարապմունքը նույնպես պետք է անցնի յերկուդ խաղի ձևով, բայց խմբերից մեկին առաջարկել հետախուզության, իսկ մյուսին՝ պահպանության պատվերներ:

2. Յերբ այդ պարապմունքը սեզի ունի ավագով արկղի վրա, բարակ տախտակով կամ յերկու ձողիկի

վրա ամրացրած վարագույրով ավագը բաժանվում է յերկու մասի ախպես, վոր մի կողմը չկարողանա տեսնել, թե ինչ է անում մյուսը: Հերթով յուրաքանչյուր խումբ դուրս է գալիս ախ շենքից, վորտեղ անցնում է պարապմունքը. այդ ժամանակ մնացող խումբը ստանում է խնդիրը, կազմում է նրա լուծման ծրագիրը, դրաններով նշում է յերման դրությունը, է հիշելով իր տեղերը պլանի վրա, հավաքում է գլանները: Յերբ ախ նախնական աշխատանքը կատարված է, յերկու խմբերն էլ հրավիրում են արկղի մոտ, դրվում է տախտակը, կամ քաշվում է վարագույրը, է խաղը սկսվում է: Խմբակավարն առաջարկում է յերկու խմբերին տեղափոխել իրենց գլանները համաձայն մի ժամվա կամ կես ժամվա ճանապարհի: Հետևելով յերկու կողմերի նոր դասավորությանը, խմբակավարը տեսնում է, թե արդյոք դիտողներից մեկն ու մեկը չի հայտնաբերել իրեն ախնափ, վոր նրան կարող է տեսնել հակառակ կողմը, է յեթե այդ այգպես է, նա առաջարկում է պլանից հավաքել բոլոր գլանները, բացի նրանցից, վորոնք հայտնաբերել են իրենց, է բարձրացնում են չիրմը: Մասնակցողները պետք է քննության առնեն ստեղծված դրությունը է վճեն, թե ինչ պետք է անել այդպիսի դեպքում: Յեթե խմբերից մի մեկն իրեն չի հայտնաբերել, առաջխաղացումը կարող է շարունակվել, կամ արվում են միջանկյալ խնդիրներ (նույն կարգի, ինչ այդ լինում է տեղանքում կատարած պարապմունքում):

4. ՄԱՐՏԻԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել պաշտպա-

նության մեջ գտնվող հրացանաձգի ընդհանուր պարտականություններին:

Պարապմունքի բովանդակությունը: Ոնգիր պաշտպանությունից: Կրակային զործողության համար նշանակված հրաձգային ջոկի դասավորությունը: Տեղի ընտրությունը, հրաձգության համար դրություն ընդունելը, տարածության չափերը մինչև տեղական տարրիկները, խրամատվելը, քողարկումը: Հակադրոհների համար նշանակված ջոկի դասավորումը: Տեղի ընտրությունը, շարք (յերամաշար, շղթա), խրամատվելը անհատական ու խմբակային, քողարկումը, դիտակալ նշանակելը խրամատում: Դիտակալի զործողությունները: Պարապմունքի վերլուծումը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Յեթե պարապմունքն անցնում է տեղանքում, ղեկավարն ընտրում է տեղամասը, և մանրամասնորեն նրանում է կրակային զործողությունների ու հակադրոհների համար նշանակված ջոկերի դասավորությունը: Անհրաժեշտ է հող տանել, վորպեսզի մասնակցողները մատակարարված լինեն խրամատվելու համար փոքր թիկերով:

Յեթե պարապմունքն անցնում է ավազով արկղի վրա, առանձնապես կարևոր է արտահայտիչ և հարմար ռեկոնֆի նախադատրաստությունը: Ըստ հնարավորությունից ցանկալի յե ունենալ պլակատներ, վորոնք ցուցադրում են դանդաղ գեպեր ջոկի դասավորությունից, հրաձգության միջոցին հրացանաձգի ունեցած դրությունից, ինչպես նաև խրամատվելու ու քողարկվելու վերաբերյալ պրակտոններ:

Պատվեր խմբակի համար: 1. Կազմել աշա-ինչ տեղամասի պաշտպանության պլանը:

2. Սովորել խրամատվել և ամենապարզ քողարկման միջոցներ ձեռք առնել:

Պարապմունքի ընթացքը: Խմբակավարը զուրա է բերում խմբակը տեղանքը, բաժանում է ջոկերի և առաջարկում է աշապիսի մի խնդիր:

«Մեր դասակը պաշտպանում է աշա շրջանը, վորտեղ մենք կանգնած ենք, առանձին ծառը, վոր դրտնվում է մեղանից ձախ, բլուրն ու անտառակը, վոր գտնվում են մեր առջևում: Մեր աշա-ինչ բլրակի վրա գտնվող պահպանությունը նահանջելու յե ձորակով դեպի աշն առանձին ծառը: Մեր հաստոցավոր դնդացիքը գտնվում է աշն բլրակի վրա. ձեռքի գնդացիքը գտնվում է առանձին ծառից 30 քայլ հեռու: Մեր հրաձգային ջոկերից մեկը պետք է անտառակի մոտ կազմի կրակային կետ՝ դնդակոծելու համար դետակի հովիտը: Զուրը պետք է դասավորվի անտառակի յեզրին, պետք է չափի տարածությունը մինչև փոքրիկ կամուրջը, մինչև աշն բլրակի կատարը, մինչև աշն թփերը: Հրաձգային յերկու ջոկ պետք է դասավորվեն հակառակ լանջի վրայի ագարակի աջից ու ձախից: Փամփշտի կայանը կլինի ագարակի յետևում, ձորակում» (Ի հարկե, աշա խնդիրը նույնպես մոտավոր խնդիր է, ինչպես և նախընթաց խնդիրները):

Յերը մասնակցողները յուրացնում են խնդիրը, խմբակավարն առաջարկում է ջոկերից մեկին դասավորվել կրակային զործողության համար, մյուսին հակադրոհի համար: Զոկերը վորոշում են տարածությունները մինչև տեղական տարրիկները, խրամատվում

։ զմեռ դ Լոկոտայի զգ քոսեմոյի ։ զգ քոսիկմոնսմ ։ զգ
Յուրաքանչյուր ջոկի հետ կատարվում է նրա գործո-
ղությունները վերլուծում, վորից հետո առաջարկվում
է ջոկերին փոխել իրենց տեղերը :

Դիտակալի պարտականությունները ցույց տալու
համար նրան առաջարկվում են մի շարք միջակայ խն-
դիրներ (աչքաչափով վորոշել տարածությունը միջև
նպատակը, դիտել մարտադաշտը և այլն) :

2. Յեր պարապմունքը տեղի յե ունենում ավագով
արկղի վրա, արվում է նույն կարգի խնդիր, ինչպես և
տեղանքում : Խնդիրը լուծելուց առաջ նպատակահար-
մար և ցուցադրել մի շարք այնպիսի պրակտիկներ, վո-
րոնք պատկերացնում են ջոկի դասավորությունը
պաշտպանության ժամանակ : Մարտիկների դասավո-
րությունն արկղի վրա, ինչպես և սովորաբար, նշում
են գլաններով :

Յանկայի յե պարապմունքի ընթացքում արկղի վրա
ցույց տալ խրամատվելու և քողարկվելու ամենապարզ
ձևերը :

5. ՄԱՐՏԻԿԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԵՋ

Պարապմունքի նպատակը : Ծանոթացնել հարձակ-
ման մեջ գտնվող հրացանաձգի ընդհանուր պարտակա-
նություններին :

Պարապմունքի բովանդակությունը : Բաշխումն
ըստ ջոկերի : Հարձակումից խնդիր ջոկերին : Ջոկերի
չարժումը մերձեցման ժամանակ : Ջոկի չարժումը հար-
ձակման չրջանում՝ ոձաչար, յերամաչար, չղթա : Վա-
զեացք և կուտակում : Հրետանական կրակով ուժակո-

ծրվող տարածությունից դուրս գալը : Գրոհի նախա-
պատրաստությունն ու գրոհը : Միջանկյալ տվյալների
լուծում : Պարապմունքի վերլուծում :

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին :
Նույն պահանջներն են, ինչ նախընթաց պարապմուն-
քում : Յանկայի յե, վոր հակառակորդը տեղանքում
նշանահարվի մարդկանցով, կամ թիրախներով, իսկ
ավագով արկղի՝ վրա՝ գլաններով :

Պատվեր խմբակի համար : Կազմել ջոկի ու նրա
մարտիկների գործողությունների ծրագիրը հարձակ-
ման գանազան չրջաններում :

Պարապմունքի ընթացքը : 1. Ղեկավարը բաժանում
է խմբակը ջոկերի և նրա հետ միասին դուրս է գալիս
տեղանքում ընտրած վայրը : Նախնական գրույց և տար-
վում, վորտեղ ցույց է արվում ջոկերի չարժման կար-
գը՝ չարժման, հարձակման ու գրոհի ժամանակ : Այ-
նուհետև ջոկերին առաջարկվում է լուծել մի շարք մո-
տավորապես այսպիսի խնդիրներ :

«Մեր դասակը հրետանու կրակի տակ մասնատվել
է ըստ ջոկերի : 1-ին ջոկին՝ չարժվել ձորակով, 2-րդ
ջոկին՝ չարժվել առվակով, 3-րդ ջոկին՝ այն թիրու-
ներով :

Մեր դասակը հարձակվում է այն թիր մոտ գրա-
նվող հակառակորդի կրակային կետի վրա : Անտառա-
կից հաստոցավոր գնդացիներ կրակում է հիշյալ հակա-
ռակորդի դեմ : Ձեռքի գնդացիներ առաջ և չարժվում ձո-
րակի աջ կողմով դեպի փոսը (յերամաչարով, 3 քայլ
միջանցներով) :

«Ջոկին կուտակվել ձորակի փոսում և պատրաստ-
վել գրոհի» :

«Ձուկը պետք է դրոհի հակառակորդին, վոր դրամ
նվում է առանձին ծառից 30 քայլ հեռու»:

Ինչպես և նախընթաց պարապմունքում խնդրի լուծումը բարդանում է զանազան միջանկյալ սովյալներով:

«Ձուկն ընկել է հակառակորդի հրետանական կրակով ուժեղացող տարածության մեջ»:

«Ձուկին առաջարկվում է կանգ առնել և քողարկվել և այլն»:

«Հրացանաձիգներից մեկը վերափոխված է» (ամենապարզ վերակապ):

2. Յեթե պարապմունքն անցնում է ավագով արկղի վրա, ցանկալի յե սկզբում խմբակի անդամներին ծանոթացնել ախպիսի սլակատներին, վորոնք պատկերացնում են ջուկի զրուծյունը հարձակման ժամանակ: Այնուհետև ջուկը ստանում է խնդիր նույնպիսի տիպի, ինչ հիշված է վերևում (մի ջուկ՝ մերձեցման շրջանից, մյուսը՝ հարձակման շրջանից, յերրորդը՝ դրոհից): Միջանկյալ սովյալներն ու հարցերը պետք է սլարգեն այն կանոնները, վոր ավագով արկղի վրա անկարելի յե պարզ ցույց տալ:

«Տեղանքի ծալքը ծածկում է հասակովը մեկ կանգնած մարտիկին: Ինչպես և չարժվում ջուկը»: «Տեղանքը չնչին չափով է ծածկում մարտիկներին: Ինչպես և չարժվում մարտիկները»:

«Ձորակի վոր կողմով ավելի լավ է առաջ չարժվել, լո՛ւյս թե մո՛ւթ կողմով» և այլն:

Պարապմունքից հետո, ինչպես և առաջ, կազմակերպվում է մանրամասն վերլուծում:

IV. ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՈՒ ՊԱՅԳԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

1. ՌԱԶՄԱԳԻՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Պարապմունքի նպատակը: Ծանոթացնել թիմիական հարձակման ու պաշտպանության միջոցներին ու ձևերին:

Պարապմունքի բովանդակությունը: Թիմիական պատերազմը, — «Հազի կռիվը հակադադի դեմ»: Ծանոթացում հակադադին ու նրանից ոգավելու կանոններին: Թունավոր նյութերից վնասվածներին առաջին ոգնություն ցույց տալը: Բնակելի շենքի ու տան նկուղի առննապարզ հակաթիմիական կահավորումը:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Այնթիներ ու նյութեր դտնելը քլոր ստանալու համար: Չոր զտիչ հակադադերի տեսակներից մեկը: Պլակատ ուղեգրիմիական գործի վերաբերյալ:

Պատվեր խմբակի անդամների համար: Սովորել ոգավել հակադադից: Առաջին ոգնությունը ցույց տալ թունավոր նյութերից վնասվածներին և ձեռք առնել հակաթիմիական պաշտպանության առննապարզ միջոցները:

Յերբ հնարավորություն և խմբակի անդամներին կողմից ցանկություն կա, խմբակավարի հսկողությամբ պատրաստվում է գաղապատարանի սխեմատիկ մոդելը:

Պարապմունքի ընթացքը: 1. Խմբակավարը ցույց է տալիս խմբակի անդամներին թուր ստանալու պրոցեսը և նրանց հնարավորութունն և տալիս ծանոթանալու նրա հիմնական հատկութուններին (հոտը, գույնը և աչքը): Քլորով մի շարք փորձեր և կատարում (քլորի մեջ իջեցնում և թացացրած մեխ, խոնավացնում և ղործվածքը կամ ներկած ջուրը, ածուխի կողմից քլորի կլանումը և այլն): Հիմնվելով այդ փորձերի վրա, կարճ զրույց և տարվում քիմիական պատերազմի մասին, — «զապի կոիվը հակազապի դեմ»:

2. Ղեկավարը ցուցադրում է ռազմաքիմիական զործի վերաբերյալ պրակտաներ:

3. Ղեկավարը ծանոթացնում է խմբակի անդամներին հակազապին ու նրա մասերին, ինչպես նաև հակազապը հագնելու կանոններին:

4. Ղեկավարն ոգտադործում է շենքը կամ մոտակա տան նկուղը և կոնկրետ որինակով ծանոթացնում է խմբակի անդամներին շենքերի հակաքիմիական ամենապարզ կահավորման միջոցներին ու ձևերին:

2. ՈՂԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Պարապմունքի նպատակը: Հասկացողություն տալ պատերազմում ողային նավատորմի զործադրություն և նրանից պաշտպանվելու ու նրա դեմ կռվելու միջոցների մասին:

Պարապմունքի նպատակը: Ավիացիայի վերաբերյալ պրակտաների ցուցադրումն ու զրույց նրանց շուրջը (սղում թռչելն ու ոգում լողալը, սավառնակ, կապովի ողապարիկ, գիրիթարը և նրանց նշանակությունը—

նր պատերազմում): Սավառնակից և ողապարիկից ծածկվելու միջոցը: Քողարկում: Ավիացիայի դեմ կռվելու միջոցները:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Պատրաստել պրակտաներ ավիացիայի վերաբերյալ և զինված սավառնակի մոդելի գծանկարներ:

Պատվեր խմբակի համար: Իմանալ ավիացիայից պաշտպանվելու ամենապարզ միջոցները:

Պարապմունքի ընթացքը: Ղեկավարը ցույց է տալիս խմբակի անդամներին ավիացիայի վերաբերյալ յեղած պրակտաները և հիմնական տեղեկություններ և տալիս ավիացիայի մասին թե՛ ընդհանրապես և թե՛ ռազմական գործում: Հենց այստեղ պարզվում է նաև ավիացիայից պաշտպանվելու և նրա դեմ կռվելու միջոցների հարցը:

3. ԶՐԱՀԱՊԱՏ ՈՒԺԵՐՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԸ՝ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Պարապմունքի նպատակը: Գաղափար տալ զրահապատ ուժերի դեմ կռվելու միջոցների մասին:

Պարապմունքի բովանդակությունը: Տեխնիկայի նշանակությունը (տեխնիկան սարսափելի է, յեթե մենք ծանոթ ենք նրան): Զրահապատ մեքենաներ, տանկեր ու զրահապատ գնդացիներ: Ինչպես կռվել զրահապատ մեքենայի, տանկի ու զրահապատ գնդացի դեմ:

Ղեկավարի պատրաստությունը պարապմունքին: Թեմայի վերաբերյալ պատրաստել պատկերավոր նյութեր ու պրակտաներ:

Պատվեր խմբակի համար: Գիտենալ կռվի գլխավոր միջոցները զրահապատ մեքենայի, տանկի ու զրահապատ գնդացի դեմ:

Պարապմունքի ընթացքը : Այս պարապմունքը հարկ է լինելու տանել զրույցի ձևով : Այդ զրույցը պետք է զարմնել ըստ հնարավորին աշխուժ ու հետաքրքիր, և վորքան հնարավոր է պատկերավորել պլակատներով : Առանձնապես նպատակահարմար է կարգալ մի քանի գեղարվեստական հատվածներ ու պատմական որինակներ զրահապատ ուժերի դեմ մղած կռվի մասին :

Զրույցում հատուկ ուշադրութուն նվիրել զրահապատ ուժերից պաշտպանվելու միջոցներին (տանկի ու զրահապատ զնացքի խոցելի տեղերը, մարդիկ տանկում ու զրահապատ զնացքում, վորտեղ և ինչպես պաշտպանվել տանկից և զրահապատ զնացքից և այլն) :

ԾՐԱԳԻՐԸ ԼՐԱՑՆՈՂ ԵՊԻԶՈՂԻԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Մեր թշնամիների բանակները :
2. Համկի (բ), վորպես Կարմիր բանակի կազմակերպիչ ու առաջնորդ :
3. Կոմյերիմիությունը քաղաքացիական պատերազմում : Կոմյերիմիությունն ու յերկրի պաշտպանությունը :
4. Ծովային ու գետային նավատորմ :
5. Կապը :
6. Հրետանի :
7. Գնդացրեր :
8. Նռնակներ :
9. Ճարտարագիտական գործ :
10. Սանիտարական գործ :

Հավելված № 1

ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. Հուշատետր հրացան . կ . բանակայինի 3-գծանի հրացանը խնամելու համար . ԿԿԲ ՀՈՒՆ կից Հայկ . Ռազմ . — Խմբադր . — հրատ . հանձնաժ . դինը 20 կոպ .
2. Դեյրեմեր . Հրացանագի նախապատրաստություն . նույն հանձնաժ . հրատարակ . դինը 60 կոպ .
3. Լիգնատ . Յերք և հակգիստ . նույն հանձն . հրատարակ . դինը 25 կոպ .
4. Ժամանակավ . հրաձգային կանոնադիրք . մաս I «Հրաձգային զենք, հրացան» . նույն հանձն . հրատարակ . դինը 20 կոպ .
5. Ժամանակավոր հրաձգային կանոնադիրք մաս II «Հրաձգային զենքի մարտական գործադրության տեխնիկան» . նույն հանձնաժ . հրատ . դինը 80 կոպ .
6. Հետեակի մարտական կանոնադիրք . մաս II Հայկ . Դիվիզ . Քաղբաժնի հրատարակ . (տպրգրվում է , չուտով լույս կտեսնի) :
7. Զրույցներ Կարմիր Բանակի մասին . ՀՍՈՀ պետհրատ . Յերեան . դինը 25 կոպ .
8. Սանիտարական ոգնությունն ու ինքնուգնությունը մարտում (տպրգրվում է և չուտով լույս կտեսնի) :

Հավելված № 2

ՀՐԱՀԱՆԳ ԱՄԵՆԱՊԱՐԶ ՀՐԱԶԳԱՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաձգարանը (տիրը) միշտ կարելի չէ կառուցել նվազագույն ուժեր ու միջոցներ ծախսելով, յեթե

գործադրվի հմուտ ղեկավարության, ջանք և ինքնագործունեություն: Այսպես, որինով՝ բնական փուր, խանդակը՝ 50, 100, 150 մետր յերկարությամբ, կարելի չե առանց մեծ ծախքի հարմարեցնել հրաձգություն համար՝ մինչև իսկ մարտական զենքից: Յերկար մարագը, նիւզը, տախտակի «բարակը» և այլն նույնպես կարելի չե հարմարեցնել հրաձգություն համար: Վերջապես՝ ամեն մի սենյակ (մինչև իսկ իրար կից յերկու սենյակ) կարելի չե ուղտադործել հրաձգարանի համար: Անհրաժեշտ և միայն ձգակ, փորպնայի հրաձգարանը տեղադրված լինի այնպես, փոր նա անմիջորեն մոտ լինի այն կաղմակերպության, վորին կից կազմակերպված և խմբակը (ակումբ, բարձրագույն կրթական հիմնարկ, դպրոց, խրճիթ-ընթերցարան): Հրաձգարանի նման դասավորությունը կկրճատի այնտեղ անցնելու ժամանակը և այդպիսով իսկ կրարելավի նրա հաճախելիությունը:

Հրաձգարանը, ինչպիսին ել լինի իր դասավորություն համար և իր կառուցվածքով, պետք և բավարարի առողջապահության հիմնական պայմաններին. բավականաչափ լույս, մաքրություն և շնչի հովհարում (վենտիլյացիա):

Հրաձգարաններն իրենց կոչումով, չափերով ու կառուցվածքով կարող են լինել յերկու տեսակ:

1. Փոքր հրաձգարան.—Հրաձգային դասարան՝ հրաձգության նախնական ուսուցումն անցնելու համար փոքր հեռակայություններից (տարածությունից) մինչև 15 մետր:

2. Մեծ հրաձգարան—գործնական հրաձգություններ, մրցակցությունների և հրաձգային մրցումների

համար 100 և ավելի մետր հեռակայությամբ (ցանկալի չե՝ մինչև 300 մետր յերկարությամբ):

Փոքր հրաձգարանը կարելի չե սարքել մեծ սենյակում, կամ յերկու կից սենյակներում, վորոնք ունեն լայն դուռ (կամ կամար), և վորոնց ընդհանուր յերկարությունն և 10-15 մետր: Այդպիսի հրաձգարանում թույլատրվում և հրաձգություն միայն կոտորիկներով:

Հրաձգարանի լայնությունը պետք և լինի առնվազն 6 մետր, հաշված յուրաքանչյուր հրացանաձգին 1.5 մետր: Յեթև հրաձգարանն ավելի պակաս լայնություն ունենա, այն ժամանակ խլացուցիչ ազդեցություն կունենա սովորողների լսողության վրա և հնարավորություն չի լինի պարապմունքը տանել ամբողջ խմբակով:

Փոքր հրաձգարանում պարապմունքները տեղի կունենան գլխավորապես յերեկոները, աշխատանքից հետո, ուստի հրաձգարանի լուսավորության վրա անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել:

Բնական լուսավորության ժամանակ յույսը պետք և ընկնի վերեկից և հրացանաձգի վերաբերմամբ մի փոքր յետեկից: Յեթև հրաձգարանը լայն և, հարկավոր և բացի դրանից լույս տալ նաև աջ ու ձախ կողմերից:

Լավագույն լուսավորությունն անկասկած երկտարականությունն և, իսկ յեթև այդ հնարավորությունը չկա, հարկավոր և դիմել նավթա-չիկացման լապտերչներին և մինչև իսկ նավթի մեծ լամպերին: Վերջին դեպքում լամպերի վրա հարկավոր և պատրաստել ուժեղիկատրներ (խոր ներս ընկած կողքի լուսամփուլներ) սպիտակ թիթեղից: Այլ ուժեղիկատրները հնարա-

վորութիւն կտան, — չնորհիվ թիթեղի փայլից առաջացած լուսի անդրադարձման, — մի կողմից՝ ուժեղացնելու լուսը, և մյուս կողմից՝ լուսը կենտրոնացնելու ցանկացած տեղերը: Թիրախների գծի վրա լուսը հրադանաձգի կողմից պետք է այնպես ծածկված լինի, վորպէսզի լուսի ճառագայթները չխփեն հրացանաձգի աչքերին, այլ լուսավորեն միայն թիրախները: Դրա համար լուսատու կետերը դասավորվում են մի գծի վրա, աջ ու ձախ պատերի վրա և առաստաղի մեջտեղին:

Լուսը կրակի գծի վրա (այսինքն այն գծի, վորի վրա դասավորվում են հրացանաձիգները) անհրաժեշտ է ցրել հրաձգարանի ամբողջ լայնությամբ (վորպէսզի չփայլեն նշանոցի կտրուկն ու հատիկը):

Տարվա ցուրտ յեղանակին հրաձգարանը, անկասկած, պետք է բնակարանային սովորական ջերմութիւն ունենա, տաքացվի, վորպէսզի պարապմունքներն արդյունավետ լինեն:

Հրաձգարանի հովհարութիւնը պետք է շարունակ թափարար լինի, հոսալի և լավ աշխատի: Դրա վրա պետք է հասուկ ուղադրութիւն դարձնել այն հրաձգարաններում, վորտեղ կատարվում է հրաձգութիւն սև (ծխով) վառողով:

Կրակի գիծը (վորտեղ գտնվում են հրացանաձիգները) պետք է նշանակված լինի, կամ առանձնացված լինի փակոցով, վորպէսզի ներկա յեղողները չխանդարեն հրաձգութիւն:

Թիրախներին գծին մոտիկ պատը պետք է բավականաչափ ամուր լինի, այնքան հաստ, վոր զնդակը չանց-

նի: Յերբ հրաձգութիւնը կատարվում է միայն կտորիկներով, միանգամայն բավական է պատի վրա ամրացնել հաստ (2 միլիմետրանոց) յերկաթե թիթեղ և այդ թիթեղը դրսի կողմից պատել թաղիքով կամ բարակ տախտակներով: Յեթե կրակում են փոքր տրամաչափանի հրացանից (և յերբ հրաձգարանի յերկարութիւնն է 40-50 մետր) պատի պաշտպանութիւն համար հաստատվում է զնդակորաներ (пулеулавливатель): Գնդակորսը մի փայտե վահան է, վորը ծածկում է ամբողջ պատը:

Գնդակորսը կարող է լինել 15-20 սանտիմետրանոց խիտ սյուններից, վորոնց դրսի կողմը պատում են 2-3 սմ. հաստութիւն տախտակներով:

Կարելի յէ կառուցել և այլ տիպի զնդակորաներ և լցնել ավազով: Դրա համար պատի մոտ ուղղահայաց ամրացվում են 15-20 սմ. հաստութիւն գերաններ, մեկը մյուսից 1,5-2 մետր հեռավորությամբ: Գերանների վրա ներքից (գետնից) մինչև առաստաղը խփում են 4-5 սմ. հաստութիւն տախտակներ: Գերաններին խրժիած տախտակների և հիմնական պատի միջև յեղած տարածութիւնը լցնում են ավազով, վորը լավ տոփանվում է (трамбуются): Ավազի շերտը պետք է լինի առնրվազն 25-30 սմ.:

Մեծ հրաձգարանը կառուցվում է մեծ սրահում, դահլիճում, մեծ նկուղում, և վորովհետև այդպիսի շէնքեր գտնելը դժվար է, ուստի ամենից հեշտ ու ետան է մեծ հրաձգարանը կառուցել խոր և բավականաչափ յերկար առվում (կամ ձորում):

Դրա համար առվի (կամ ձորակի) պատերն ու հատակն ուղղվում են և դուրս ձգած հողը թափվում է

առվի յեզրերին, կազմելով լցնովի պատնեշ հրաձգա-
րանի ամբողջ յերկարությամբ, վորը ծառայելու յե,
վորպես պարիսպ հրաձգարանի շուրջը:

Առվի յեզրերը լցրած հողը (թումբը) հարկավոր է
ամրացել: Դրա համար գործադրվում է յերկու միջոց:

ա) Յերկու կողմից տանդուղքի ձևով դարսել աղյու-
սածն ճիւղ, (խոտի կողմը ներքև): Յուրաքանչյուր ճիւղ
ամրացվում է փայտի ճյուղերով, կամ հետը դարսվում
է խռիվ: Պատնեշի ամրության համար հողը լւով տո-
ւանվում է և ամրացվում է ցցերով կամ խռիվով:

բ) Դուրս գցած հողը դրսի ու ներսի կողմից առնել
ցանկապատի մեջ, լավ տափանել և ցանկապատի յեր-
կու կողմը հենել ցցերով (ցցերն ամուր խիւղ հողի
մեջ մեկը մյուսի դեմ): Այնուհետև ցանկապատը ամ-
րացնել ցցերի հետ, դրա համար ցցերի վերին ծայրերն
իրար կապել ամուր կապով:



ՆԿԱՐ № 1

ՊԱՏՆԵՇԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ՃԻՄԵՐՈՎ
(ԽՈՏՈՐՆԱԿ ՏՐԱՄԱՏ)


ՊԱՏՆԵՇԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ
ՅԱՆԿԱՊԱՏՈՎ

Հրաձգարանը պետք է վորջան հնարավոր է յերկար
լինի, վորպեսզի նա հնարավորություն տա կրակելու
300 մետրից: Համենայն դեպս նրա յերկարությունը
100 մետրից պակաս չլինի: Լայնությունը պետք է լի-
նի 6-10 մետր (և ավելի, յերբ ձորակը լայն է):

Հրաձգարանի բարձրությունը հաստակից մինչև
հողաթումբի վերին ծայրը պետք է լինի 3.5 մետր:
Պատնեշի բարձրությունը թիրախների յետևում պետք
է լինի 5 մետր, պատնեշի հաստությունը վերևում
պետք է լինի 1-1.5 մետր:

Գնդակների սխալ ուղղակի թռիչքներն ու քնդոտո-
յունները (рикошет) բռնելու համար հրաձգարանի
ներսում, լայնքով շինվում են տրամբերներ (միջա-
թումբեր):

Տարածությունը մեկ տրամբերից մինչև մյուսը
վորջվում է այն դժի հարթադժով, վոր անցնում է
պառկած հրացանաձգի աչքից, կրակել դժից՝ առաջին
տրամբերի ներքին ծայրից դեպի յերկրորդ, յերրորդ,
չորրորդ տրամբերի վերին ծայրն այնպես, վոր տրա-
վերսները տան անընդհատ, առանց լուսանցքի մի ծած-
կույթ մինչև թիրախների պատնեշը (վորը հանդիսանում
է գնդակորս):



ՆԿԱՐ № 3

ՏՐԱՎԵՐՍԻ ՏԵՄԲԸ
ԿՐԱԿԻ ԳՄԻՑ

ՏՐԱՎԵՐՍԻ
ԽՈՏՈՐՆԱԿ ՏՐԱՄԱՏԸ



ՆԿԱՐ № 3

ՏՐԱՎԵՐՍՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԿԱՆՎԱԾ Ե ՇՐԱՋԳԱՐԱՆԻ
ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ № 3

ԱՎԱՋՈՎ ԱՐԿՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՆՐԱՆԻՅ ՈԳՏՎԵԼԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տեղանքի նշանակությունը հասկանալը և քարտեզ կարդալու հմտությունն առաջին տեղն են բռնում՝ ուղի-մական գործում։ Դրա համար ել անհրաժեշտ է, վոր-պեսզի փոքր ի չափն ուղիմասին գրադետ ամեն մի քա-ղաքացի, նայելով տեղագրական քարտեզին, կարողա-նա վոր միայն հասկանալ քարտեզը, այլև տալ պատ-կերացրած մակերեսի պատշաճ գնահատականը։

Քարտեզ կարդալը սովորեցնելու համար՝ ավագով արկղը անփոխարինելի ցուցադրական ձեռնարկ է թե՛ դեկավարի և թե՛ սովորողների համար։

Տեղանքի ուղեքի յուրաքանչյուր տեսակ, վոր հո-րիզոնականներով պատկերացված է խոշոր մասշտաբի (50-ից մինչև 100 սաթեն մեկ մատնաչափում) վարժա-կան տեղագրական քարտեզի վրա, կարելի չէ բավա-կան ճշտությամբ պատկերացնել ավագով արկղի վրա։ Դրանից հետո դեկավարը մանրամասնորեն կմշակի այդ, բացատրելով նրա բոլոր բաղադրիչ մասերը։

Ունենալով իր առաջ թղթի վրա տեղանքի պատ-կերը և նույն տեղանքը բնական ձևով ավագից, սովոր-

ողը շատ արագ յուրացնում է տեղանքը քարտեզի մի-ջոցով պատկերացնելու գաղափարը, վորը մեծ մասամբ ամենադժվարն է քարտեզը կարդալու ուսուցման մեջ։

Յեթե բացի ավագից պատրաստված ուղեքից սո-վորողը ձեռքի տակ ունեցած նյութից պատրաստի ա-մենապրիմիտիվ տեղական առարկաներ (տներ, ջրա-ղացներ, յեկեղեցիներ, ցանկապատեր և այլն) և այդ առարկաները դասավորի իրենց տեղերում՝ համաձայն վերցրած պլանի, այդպիսով սովորողը կծանոթանա նաև պայմանական նշաններին։ Այդպիսով նա տեղա-կան առարկաների պատկերը կհիշի վոր թե մեռյալ նը-շաններն անգիր անելով, այլ հիշելով այդ առարկայո-րեն (չորհիվ այն նման դժագրությունների, վոր մեծ մասամբ գտնվում են նաև տեղական առարկաների պայ-մանական նշաններում)։

Այդպիսի յերկու կամ յերեք պարապմունքից հետո սովորողներն այնքան են յուրացնում յերկրի մակերեսը թղթի վրա պատկերացնելու միջոցը, վոր արդեն ինք-նուրույն կարողանում են գործ ունենալ ավագի հետ և կարողանում են նրանից տված պատվերով պատրաս-տել ուղեքի պլանը։

Դրանից հետո սովորողը կարող է խոշոր մասշտա-բից անցնել փոքր մասշտաբի։ Փոքր մասշտաբը հնա-րավորություն է տալիս արկղի վրա պատկերացնել վոր թե մակերեսի փոքրիկ, այլ, դիցուք, մի քանի կիլո-մետր տարածությամբ տեղամասեր։ Յեվ արդեն այդ տեղամասերի վրա պարզ կարելի չէ լուծել խնդիրներ հետախուզությունից, կամ գումարտակի մարտական պահպանությունից։

Այդպիսի դեպքերում ռեւլեֆը խաղում է առանձնապես կարեւոր դեր, վորովհետեւ ռեւլեֆից կախված է առջևում գտնվող տեղանքի գնդակոծը և իր գործածութեան համար ծածկույթների հմուտ ոգտագործումը: Այստեղ սովորողը տեսնում է վերից փաստորեն գործողութունների ամբողջ տեղամասի ռեւլեֆ քարտեզը և առողջ դատողութեամբ ընդունում է իր վորոշումները: Դրա հետ միաժամանակ նա վարժվում է ճիշտ վորոշումներ ընդունել քարտեզի վրա, վորը պարագմունքների ժամանակ շարունակ պետք է ունենալ սովորողների աչքի առաջ ավագով արկղի վրա:

Կրակի այս կամ այն տեսակի գործադրութեան տեսակետից տեղանքի ճիշտ գնահատականը տալու համար, իհարկէ անհրաժեշտ է, վոր սովորողը լավ ծանոթ լինի ժամանակակից զենքի՝ ձգարանական հատկութիւններին ու հնարավորութիւններին: Հրաձգային գործի ուսուցման ժամանակ նույնպես ավագով արկղը կարող է ոգտակար լինել, վորովհետեւ նրա վրա կարելի չէ պարզ դադափար կազմել գնդակի կամ արկի թռիչքի մասին: Դրա համար ձգում են յերկաթալար հրացանաձգի կանգնած տեղից մինչև նշանը, հետագիծը նշող լարերը անցկացնելով մի շարք ուղղահայաց (ավագի մեջ ցցած) տախտակներից:

Այս միջոցը ծանոթացնում է սովորողին արկերի ու զնդակների ցրմանը, զծի վերելքին ու թեքմանը, մեռյալ տարածութիւններին, մակերեսների վրա անտեսանելի նպատակների դեմ և իրենց գործի գլխի վրայով հրաձգութիւններին:

Դիրքի ընտրութեան և նրա վրա գործերի դասավորութեան ժամանակ սովորողին լայն հնարավորութիւն

է տրվում, ոգտվելով ավագով արկղից, ցույց տալ գիրքի ամրացման բոլոր միջոցները: Դրա համար նա ավագի մեջ պատրաստում է խրամատներ, խրամադիներ, գնդացրային բներ, լարափակոցներ և այլ ամրաշինական կառուցվածքներ:

Իհարկէ, խրամատներ, ծածկույթներ պատրաստելու ուսուցումը կպահանջի ավելի խոշոր մասշտաբ, քան թէ այն, վոր վերցված է տեղանքը մարտավարական պարագմունքների համար պատկերացնելու նպատակով: Բայց այս հանգամանքը գործը զգալարացնել չի կարող: Կարելի չէ մանրամասն առանձին տալ թեկուզ հենց այն խրամատը, վոր շինված է ավագում փոքր մասշտաբի տեղանքի վրա: Դրա համար արկղի մյուս մասում խրամատը կարելի չէ կառուցել ցանկացած չափով, համաձայն արկղի չափերի:

Ավագով արկղը կարելի չէ հարմարեցնել հեռանկարային պլան պատրաստելու համար: Այդ արդեն բավական բարդ աշխատանք է, բայց նա հնարավորութիւն է տալիս սովորողներին վարժվելու տարածութիւնները վորոշելու մեջ, և այդ փոխադրելու իսկական տեղանքի պարագայի մեջ:

Կարծում ենք, վոր ավագով արկղի գործադրութեան վերոհիշյալ հնարավորութիւնները, վորպես ձեռնարկ մի շարք ոգտական առարկաների ուսուցման համար, այդ արկղը պարտադիր են դարձնում յուրաքանչյուր ոգտական անկյան, դպրոցի, ակմբի ու իրճիթ-ընթերցարանի համար:

Արկղի չափը չպետք է չափ մեծ լինի, վորովհետեւ մեծ չափերի արկղը նախ չափազանց

ծանրաշարժ կլինի, և յերկրորդ՝ չափից դուրս լայնությունը կգծվարացնի աշխատանքը նրա կենտրոնական մասում: Միանգամայն բավական են արկղի այսպիսի չափեր՝ յերկարությունը՝ 2 մետր, լայնությունը՝ 1 մետր 30 սանտիմետր և խորությունը՝ 35-ից մինչև 50 սանտիմետր:

Արկղը պետք է պատրաստված լինի 1½ դյույմի տախտակներից և ամուր կապված լինի, վորպեսզի ավազը չթափվի: Արկղի համար վրտներ չինելու կարիք չկա, վորովհետև ավազի ծանրությունն այնքան մեծ է, վոր մինչև իսկ ամենամուր վրտները չեն առ արկղին անհրաժեշտ կայունություն: Ամենուրա՛յն հենարանն արկղի համար սովորական իշուկն է, զորսով վրտներով: Իշուկի բարձրությունը պետք է հավասար լինի 40 սանտիմետրի, յեթե արկղի խորությունը 35 սանտիմետր է:

Ավազը, նախ քան արկղը լցնելը, պետք է մազվի և ապա մի փոքր թրջվի: Ավազի խոնավությունը պետք է այնպես լինի, վոր նա չցրվի, յերբ պատրաստվում է ռեյեֆի զառիթափը (крытвизна): Ավազի լավագույն տեսակն արկղի համար դեղին ավազն է, վոր սովորաբար գործ է ածվում պարտեզի ճանապարհներին ցանկու համար: Յեթե տեղական պայմանների պատճառով այդպիսի ավազ գտնելը դժվար է, և կա միայն գետի ավազ, այդպիսի դեպքում հանձնարարվում է ավելացնել նրա հետ չորացրած ու մանրած վառարանային կավ: Այդ կավը, յերբ հավասարաչափ խառնվում է ավազի հետ և ապա ամբողջ արկղում թրջվում, կապող տարր է դառնում: Այդպիսի խառնուրդից հնարավորություն կլինի պատրաստել ռեյեֆի ամեն տեսակ ձևեր: Դժվար

և վաղորդք վորոշել, թե խառնուրդի համար ինչքան կավ է պահանջվում: Այդ ամբողջովին կախված կլինի ավազի տեսակից: Աշխատանքի ընթացքում ավազի մեջ կալվի պակասությունը կզգացվի անմիջապես և հետոթյամբ կարող է վերացվել:

Ավազը կամ կավով խառնուրդը պետք է շարունակ փորվի և փոքր ինչ թրջել, հասցնելով ցանկացած խոնավության, իսկ յեղած կոշտերը խնամքով տրորել, մանրացնել:

Արկղում կատարվող աշխատանքների հարմարության համար անհրաժեշտ է պատրաստել.

1. Փոքրիկ ջրցիբ խիտ ցանցով, ավազը հավասարաչափ թրջելու համար:

2. Ձանազան մեծության փոքրիկ փայտիկներ:

3. Փայտե գոգավոր թիակներ:

Դրանով սպառվում է ավազի արկղի գլխավոր կահավորումը: Հետագա կատարելագործումները կարելի չի մտցնել աստիճանաբար, հարկ յեղած դեպքում: Որինակ՝ ավազից ռեյեֆ պլան պատրաստելու համար ավելի մեծ չափով, քան թե տրված քարտեզի մասշտաբն է, աշխատանքի ճշտության համար արկղի վրա լարեր են ձգում, գծագրելով այսպես առած, նրա վերին մակերեսը, այս կամ այն մեծության հավասար քառակուսիների: Այդ քառակուսիները համապատասխանում են նույնպիսի, բայց ավելի մանր քառակուսիներին, վորոնցով պետք է բաժանել քարտեզը: Այսպիսով, մի վորեն քառակուսում գտնվող ռեյեֆ պլանն ավազից պատրաստելիս, տեղանքի պատկերը մեծանում է այնքան անդամ, քանի անգամ լարերի քառակուսին մեծ է քարտեզի վրա գծագրած քարտեզից:

Արկղի մակերեսը քառակուսիների բաժանող լարն ամրացնում են արկղի վերին յեզերերին տափակ գլուխներ ունեցող մեխերով: Քառակուսիները հանձնարարվում են պատրաստել 174 քառակուսի սանտիմետրից վաղ պակաս մեծությամբ (այսինքն քառակուսու յուրաքանչյուր կողմն անվագն 13,2 սանտիմետր), վորպեսզի նրանք չխանգարեն աշխատողին՝ լարերի միջև կատարած շարժումներին: Քառակուսու ողնությամբ մեծացնելու միջոցի հատուկ բացատրության հարկ չկա, վորովհետև մեծացումը կատարվում է նույն ձևով, ինչ ձևով սովորաբար նկարները մեծացնում են դժադրության ժամանակ:

Այժմ անցնենք տեղական ատարկաների պատրաստմանը, վոր անհրաժեշտ են ավագով արկղի համար:

Գյուղերը կարող են պատրաստվել կամ առանձին տնակներով և այլ շենքերով փոքրիկ փայտիկներից, ներկած սովորական ներկերով, կամ բարակ տախտակների կամ սովարաթղթի վրա կպցրած ամբողջ գյուղի նկարով:

Վաղորդ (համապատասխան մասշտաբով) պատրաստած ամբողջ գյուղերը հեշտացնում են աշխատանքը պարապմունքների ժամանակ, վորովհետև այդ դեպքում հարկ չի լինի պլանում դասավորել յուրաքանչյուր տնակն առանձին:

Գետերը, առվակները, լճերն ու ձահեծներն ամենից լավ է պատրաստել բարակ տախտակի վրա կպցրած և ջրի գույնի ներկած թղթից: Այդ միջոցն ամենից հարմարն է ու դիմացկունը: Յերբեմն այդ անում են ներկած ապակույց, բայց այդ միջոցը մենք չենք հանձ-

նարարում, վորովհետև նա ավելի բարդ է և դիմացկուն չէ: Գետերի նշող ապակու բարակ շերտերը հաճախ կտրվում են, կտորները մնում են ավազի մեջ, և խառնվելով ավազի հետ, հաճախ կտրատում ձեռքերը: Բարակ տախտակից պատրաստած գետերի առանձին տեղամասերը դասավորվում են հարկավոր ուղղություններով և ցցվում ավազի մեջ: Այնուհետև ավազով լցվում են սփերն անհրաժեշտ բարձրությամբ, իսկ գետերի պտույտների համար պատրաստված են գանազան աստիճանի կորություններ:

Յերկաթուղիները պատրաստվում են նույն ձևով ինչ՝ գետերը: Տախտակի վրա կպցնում են ուղիների դժերի նկարը (մեկ, յերկու կամ յերեք հատ): Կապերն ու սլաքները պատրաստվում են առանձին:

Յերկաթուղիները դասավորելիս չպետք է ցցել, ավազի մեջ, ինչպես գետերն ենք անում, այլ ընդհակառակն, նրանց տակը հարկավոր է ավազի թումբ պատրաստել, ավազից պատրաստել գառնվայր և առուներ: Գետնուղիները (рунтовыя дороги) պատրաստվում են հենց ավազի վրա, տոփաներով ավազը և անցկացնելով կողքի առուն: Կամուրջները պատրաստվում են առանձին, դանազան մեծության փայտից կամ սովարաթղթից (կարտոնից): Վերտացույցները, սեմաֆորները, ուղեցույցները և այլ մանր ատարկաները պատրաստում են բավական քանակությամբ և ջրի զույնի ներկած թղթից, վորոնք մեջ միշտ էլ կլինեն հենց իրենք սովորողները, վորոնք մեջ միշտ էլ կլինեն այդ գործը սիրող մարդիկ, վորոնք կկարողանան բավական նման պատրաստել այդ:

Անտառներ պատրաստելու համար ծառայում է և մամուռը (վորը դասավորվում է սլանի ցույց սոված

տեղերում) : Բացի դրանից փշտտերն ծառերը կարելի
յէ պատրաստել երկտրալարից (վորը բաղկացած է
մետաղի շատ բարակ թելերից) :

Դրա համար ելեքտրալարերը բացում են և ապա
կրկին ուրորում, մեջը դնելով կեղևաթելեր, վորոնք
պետք է երկտրալարից դուրս ցցվեն դանադան ուղղու-
թյուններով :

Յերբ այդ ձևով պատրաստված է մեկ մետր յեր-
կարությամբ լար, կտրտում են հարկավոր մեծու-
թյամբ և ապա կեղևաթելերը խուզում են, տալով ծա-
ռի տեսք : Դրանից հետո այդ ծառերը թաթախում են
կանաչ ներկի մեջ, չորացնում են և գործածում, ցցե-
լով ավազի մեջ, կամ անտառի տարածությամբ
պատրաստած բարակ տախտակի մեջ : Վերջին դեպքում
(տախտակի վրա) ամրացնում են հերունով (բիզով) :

Վերջինս ավելի հարմար է, վորովհետև անտառ-
ները ռելյեֆի վրա տեղավորելիս հնարավորություն է
տալիս միանգամից ծածկել անտառային տարածու-
թյուններն ընտրած պլանով, և վուչ թե յուրաքան-
չյուր ծառն առանձին տնկել ավագում :

Յեթե կամենում են պլանին գեղարվեստական տեսք
տալ, արտատեղերն ու արտերը ծածկում են կանաչ
կտորով կամ ներկած բարակ թղթով, վորոնք նայած
տեղամասերի սահմաններին, կտրատվում են անհրա-
ժեշտ չափով :

Ավելի մեծ է լինում տպավորությունը, յերբ
դրա համար գործադրում են ցանկացած գույնով ներ-
կած թեփ : Այդ թեփը ցանում են արտատեղերի,
ցանած արտերի, կավային ձորակների և այլ տեղե-
րում :

Նոր պարապմունքների համար ավագը փորփրե-
լուց առաջ, թեփը պետք է զգուշությամբ վերցնել,
ավագը չկեղտոտելու համար :

Մի քանի խոսք էլ ավագով արկղի ամենահարմար
գործադրության այն հարմարանքների մասին, վոր
անհրաժեշտ են սովորողներին տեղանքի ռելյեֆին ծա-
նոթանալիս :

Վարպետի սովորողը պատրաստած պլանի ռելյե-
ֆի բոլոր ուղղություններով պարզ դադափար կազմի
տեղանքի տրամատի մասին, լավագույն միջոցը կա-
րող է լինել բավականաչափ հաստ ապակու ոգտա-
գործումը : Այդ ապակով ավազի ռելյեֆը կտրվում է
ուղղահայաց գծով : Դրա համար նշած գծով ապակին
սեղմվում է ավազի մեջ, մի կողմից ավագը թափ-
վում է, իսկ մյուս կողմը, վոր մնացել է կպած տ-
պակուն, տալիս է տեղանքի տրամատը (ПРОФИЛЬ) :

Հորիզոնական գծերին ծանոթացնելու համար ող-
տագործվում են մի քանի ապակի, վորոնցով հաջոր-
դաբար, հավասար տարածությունից պետք է կտրել
վերցնել ավազից կառուցած բարձունքը :

Յերբ բարձունքն արդեն պատրաստված է, նրա
վերին ապակով հատվածի ուրվագիծը կարելի յէ գծա-
գրել ապակու վրա ներկով : Դրանից հետո ապակու
վրա յեղած ավագը թափվում են և ապակին վերցնում :

Նույնպես վարվելով մյուս ապակիների հետ, մենք
ստանում ենք մի շարք հորիզոնականներ (ГОРИЗОНТАЛИ) :
Ապակիներն իրար վրա դնելով, այդ հորիզոնականնե-
րը լրիվ դադափար են տալիս բարձրունքները թղթի
վրա պատկերացնելու միջոցների մասին :

Հեռանկարային սելյեֆ (перспективный рельеф):
պլան կառուցելու համար արկղի նեղ կողմերից մեկը
պետք է վերջանա հեռանկարային դեկորով (декора-
ция), այսինքն մի տեսարանի նկարով, վորը ավա-
ղից պատրաստած սելյեֆ պլանով պատկերացրած տե-
ղանքի շարունակությունն է:

Տեղական առարկաները պետք է պատրաստվեն զա-
նազան մեծության և դասավորվեն հաջորդական կար-
գով, աստիճանաբար փոքրանալով, յերբ հեռանում են
դիտողի աչքից, (դիտողը կանգնած է արկղի հակա-
ռակ նեղ կողմին): Այս պլանի համար բացի տեղական
առարկաններից պատրաստվում են առանձին մարդկանց,
հրաձգային շղթաների, զորասյունների, մարտկոցնե-
րի, զուժակների և այլ պատկերներ:

Այդ պատկերները պատվորվում են պլանի զանա-
զան տեղերում և սովորողին պարզ գաղափար են տա-
լիս, թե այս կամ այն առարկաները ինչ չափով են
յերևում տեղանքում: Այս պլանը լավ կատարելու դեպ-
քում հնարավորություն է տալիս այնպիսի պարապ-
մունքներ ունենալ, վորտեղ կարելի չի տարածություն-
ները վորոշել և հրաձգության համար նշանոց դնել:

Այսպիսի արկղերն ավելի պարզ պատկերացում
տալու համար մեքենայացվում են: Նրանց մեջ յժակ-
ների ողնությամբ սարքվում են վայր ընկնող ու չարժ-
վող նշաններ: Դրա համար արկղը զանազան ուղղու-
թյուններով ունենում է անցքեր, վորտեղից դուրս են
ցատկում նշանները: Այդպիսի կահավորումն, իհարկե,
չառ ավելի բարձր և սովորականից, և նրա պատրաս-
տելն ավելի մեծ աշխատանք է պահանջում:

Ամրաշինական (фортификационные) կառուց-
վածքների հարմարաքների մասին սովորական ավագի
արկղում, չառ խոսալու հարկ չկա, վորովհետև յու-
րաքանչյուրի համար պարզ է, վոր այդ նպատակի
համար ոժանդակ նյութ կծառայեն վաղորդ պատրաս-
տած բարակ ճիւղոտները (խրամատներն ամրացնելու
համար), բարակ ցցերը, տախտակները և այլն, ինչպես
նաև քաթանի կտորից կարած փոքրիկ տուրակներ ա-
վազով լցնելու համար:

Ամփոփելով վերևում ասածները, գալիս ենք այն
գեղարկացության, վոր հասարակ ավագով արկղի ա-
ռավելությունն ակնհայտ է վորջ միայն այն պատճա-
ռով, վոր նա ամենապարզ և վերին աստիճանի ճկուն
ձևոնարկ է սովորողի ձեռքում, այլ և այն պատճա-
ռով, վոր նա համարյա վորջինչ չարժե և միանգամայն
մատչելի չի յուրաքանչյուր, մինչև իսկ փոքրիկ, քաղ-
լուսավորական կազմակերպության համար:

Հավելված № 4

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՄԲԱԿԻ ՇԱՍԱՐ ԱՆՇՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒ ԶԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. 3-ը գծանի հրացանից կոտորելով կրակելու
դորժիք:
2. Փոքր տրամաչափանի հրացան:
3. Նշանառություն հաստոց:
4. Շարժական հատիկ:
5. Կլոր ցուցան նշանառության միատեսակու-
թյունը ստուգելու համար:

6. Պարազայք հրացանը մաքրելու և յուզելու համար:

7. Քսելու յուզ (հրացանի):

8. Խծուծ, հնոսիք, հին, բայց մաքուր լավ:


Հավելված № 5

ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՈՑ

Հրաձգության սկզբնական ուսուցման ժամանակ առանց նշանադրության համար հաստացի յուր դնուրը դժվար կլինի: Բայց ճիշտ նշանադրության հաստացիները թանկ են: Ուստի կարելի չե յուր դնալ դաշտային հաստացով, վորը դժվար է պատրաստել:

Վերջնում են A տախտակը մի մեծ յերկարությամբ և 20 սանտիմետր լայնությամբ: Նրան ամրացնում են ուղղահայաց B տախտակը՝ 40 սանտիմետր բարձրությամբ 6 փորվածքով (4×4 սանտիմետրի): Փորվածքը հրացանի ալուստի (10 ж а) համար և (ներքին չորժական ուղի): Այդ տախտակները կարող են լինել հիմնական: Իսկ B կոճղը կարելի չե պատրաստել ամուր փայտի կտորից՝ կաղնուց, կեչից, ծփից և այլն: Կոճղի հաստությունն և 10 սմ., լայնությունը՝ 20 սմ., բարձրությունը՝ 40 սմ.: Նրա վրա հրացանն ամրացնելու համար սրուցվում և կտրվածք ափսյակի չափի, վոր նրա մեջ կիպ մասի հրացանի ալուստը պահեցնող սկապտուփի մի մասի հետ՝ ձգանի կամրջակի մաս: Այդ կտրվածքում հրացանն ամրացնում են հասարակ սեղով: Այդ սեղով կարելի չե ուղղել նաև հրացանի թեքումը: B կոճղը A տախտակին չի ամրացվում: Այլ նա պետք և աղառ չարժի A տախտակով: Միևնույն ժամանակ նա

պետք և լավ հագնի A տախտակի վրա և հաստանվի: Այդպիսի հաստացը պետքական և բոլոր տեսակ դուր-




ՆԿԱՐ № 4

թյամբ նշան բռնելու համար: Իսկ յերբ չի կարելի պատրաստել այդպիսի պարզ հաստացի անգամ, այդ դեպքում սկզբնական ժամանակներում կարելի չե յուր գլուխը հասարակ տուրք կով (2×4 ֆառորդի), վոր լքցվում և թեփով կամ ավազով: Այդ տուրքակը գնում են վրա և թեփով կամ սեղանի վրա, նախած թե ինչ հաստակի, ափսոսի կամ սեղանի վրա, նախած թե ինչ հրացանը ամրացնելու համար և նախ ակտի մեջ, վոր պատրաստում են սկզբում՝ ձեռքի ավազ, իսկ հետո՝ հենց հրացանով, վորպեսզի հրացանը տուրքակի վրա նստած լինի կիպ, չորոքվի, և նրան տրված դրությունը կայուն լինի: Հրացանը տուրքակի վրա կայուն կլինի, յերբ նա ընկած և տուրքակի վրա և չի սկսում իր պահեցնող սկապտուփով:

ՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՏԻԿ



Ուղղանկար ստվորքներ ձեռք բերելու վարժու-
թյունը բաղկացած է ամենից առաջ, աչքի վարժու-
թյունից, ձիշտ հատիկ վերցնելու հմտությունից և հա-
տիկը դնելուց: Այդ հիմնական հմտությունն է, առանց
վորի դիպուկ հրացանածիկ լինել չի կարելի:



ՆԿԱՐ № 5

Թե ինչ է հարթ հատիկը, կարելի չե ցույց տալ մատ-
ների վրա կամ հատուկ գործիքով, վորը կոչվում է շար-
ժական հատիկ: Շարժական հատիկը կարելի չե հեշտու-
թյամբ պատրաստել ստվորաթղթից կամ կտրել բարակ
տախտակից:

A ուղղանկյան մեջ (6×5 սմ.) կտրում են a b a
կտրուներ, վորանդ aa—2 սմ. և a b—1,5 սմ. և: Իսկ
B ուղղանկյան մեջ, վորը 0,5 սմ. պակաս է Ա ուղղան-
կյունից տրում են r c d հատիկը: Յեվ ահա գործիքը
պատրաստ է: Նրա գործունեությունը պարզ յերևում
է նկարի վրա: Այդ գործիքով կարելի չե ցույց տալ մեծ
հատիկ, վորը հատիկ, աջ կամ ձախ վեցրած հատիկ:


ՇԱՐժԱԿԱՆ ՎԱՐՇԱԿԱՆ
ՇԱՐժԱԿԱՆ ՎԱՐՇԱԿԱՆ

(ՇԱՐժԱԿԱՆ ՎԱՐՇԱԿԱՆ)

Ձախ կողմից վերևում՝ գլխաչափ ու կրքաչափ և ներքևում՝
գլխաչափ ու գնդացրային թիրախներ:

Աջ կողմից վերևում՝ գոտկաչափ ու հոտակաչափ և ներքե-
վում՝ գոտկաչափ, գնդացրային ու գոտկաչափ թիրախներ:


Հավելված № 8
ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՔԼՈՐԸ (ՓՈՐՁ)



60

60

Քիլոս № 5




40

40

Քիլոս № 6

ՆԿԱՐ № 7



ՆԿԱՐ № 8

Փորձը կատարելու համար պետք է դնել 2 քիլոմիլիական անոթ, 2 խցան, ապակե խողովակ, 2—3 գրամ մարգանց-թթու կալիում, աղային թթվուտ, ջուր, փոքր կտոր լերկաթ, չորի կտոր, հաց։

Քլոր ստանալու համար զեկափարք փերցնում է յերկու մաքուր անոթ, ապակե խողովակ, վորը լամպի բողբի վրա կուտրած է ուղիղ անկյան տակ, խցան և մի կտոր բամբակ և պատրաստում է ախպիտի մի գործիք, վորտեղ քիմիական անոթները խցանների ու խողովակի սղնթի յամբ կազմում են ուղիղ անկյուն։

Այնուհետև մի անոթի (քիմիական) մեջ լցնում են 2—3 գրամ մարգանց-թթու կալիում, սե աղ և կանաչափուն փայլով (վաճառվում է բոլոր զեկատներում և գործ է ածվում, վորպես արտահան միջոց սղոցումների ու լվացումների համար)։ Այնուհետև ավելացնում են աղաթթվուտը, վորին հավասար չափով ջուր և խառնը-

ված և անոթին ամուր փակում են խցանով: Իսկույն սկսում է արտադրվել թրբ գաղը, վորը կհամարվի յերկրորդ անոթի մեջ: Յեթե անոթը թեթև տաքացնելու լինենք, թրբն ավելի արագ կարտադրվի:

Թրբը ստանալուց հետո պետք է տալ ներկա յեղույներին ծանոթանալու նրա հոտին (զգուշությամբ), տեսքին, գույնին. բացատրել, վոր նա ուղից ծանր է, դրա համար թրբը լցնել մի անոթից՝ մյուսը: Յեթե վերջնենք մեխը և նախապես սրբենք թաց լաթով ու զնենք թրբով անոթի մեջ, մեխը կծածկվի ժանդով: Յեթե թրբի մեջ զցենք գունավոր գործվածքի կտոր, կտորը կխուսանա:

Յեթե թրբի մեջ զնենք մի կտոր հաց, նա կստանա թրբի հոտ և աղի համ: Յեթե թրբի մեջ ջուր լցնենք և լափահարենք, ջուրը կստանա թրբի հոտ և աղի համ:

Յեթե թրբով անոթի մեջ լցնենք կիտով չափ սողալի լուծույթ և ապա ներկա յեղույներին տանք ծանոթանալու փորձի արդյունքին, կտեսնենք, վոր թրբը չկա: Սողալի լուծույթը կլանեց թրբը: Յեթե թրբով անոթը ծածկենք խցանով, վորի միջով անցնում է ապակե ձաղարի խողովակը, իսկ ձաղարի մեջ լցնենք մանրացրած ածուխ, վորը սկզբում չիկացրած էր և ապա սառեցրած, կտեսնենք, վոր անոթից ածուխի միջով թրբի հոտ չի գալիս: Ածուխը կլանում է թրբը:

Թրբը ստանալու փորձը պետք է կատարել չառ խրնամքով, վորովհետև պետք է հիշել, վոր նախ աղաթթվուտը վնասակար է, իսկ ստացած թրբն ավելի ևս վնասակար է: Դրա համար պետք է փորձը կատարել խրնամքով, իսկ թրբը հոտ քաշելու տալ զգուշությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բացատրագիր 3 էջ
2. Բազմական վառիկն ու ԽՍՀՄ պաշտպանությանը 14 »
3. Հրաձգային գործ 18 »
4. Մարտը դաշտում 24 »
5. Բազմական տեխնիկան 43 »
6. Եսկզողիկ պարապմունքների ցուցակ . . . 46 »
7. Ծրագրին վերաբ. գրականության ցուցակ . . 47 »
8. Հրահանգ ամենապարզ հրաձգարան կազմակերպելու մասին 47 »
9. Ավագով արկղի պատրաստումը 54 »
10. Անհրաժեշտ գործիքների ու ձեռնարկների ցուցակ 65 »
11. Նշանադրության հաստոց 66 »
12. Շարժական հատիկ 68 »
13. Թիրախների տիպարները 69 »
14. Ինչպես ստանալ Թրբը 71 »

« Ազգային գրադարան



NL0206969

ԳԻՆԸ 20 Կ.

ԿՕ. 742